ISBN 978-9939-1-1286-2

Մենք բոլորս մի երկնքի տակ ենք ապրում,
բայց ոչ բոլորն ունեն միևնույն հորիզոնը:

Կոնրադ Ադենաուեր

ԺԱՄԱՆԱԿՆ Է ԳՈՐԾԵԼՈՒ

ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

ՁԵՌՆԱՐԿ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

KONRAD ADENAUER STIFTUNG

ԵՐԵՎԱՆ 2021

CDA EFF Eduardo Frei Foundation

ԺԱՄԱՆԱԿՆ Է ԳՈՐԾԵԼՈՒ

ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

ՁԵՌՆԱՐԿ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ
2021

KONRAD
ADENAUER
STIFTUNG

CDA EFF
Eduardo
Frei Foundation

ՀՏԴ 396:316(07)
ԳՄԴ 66.74+60.5g7
Ա 732

Հրատարակության է երաշխավորվել
«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի և «Էդուարդո Ֆրայ» հիմնադրամի կողմից:

Ասատրյան Լիլիթ
Ժամանակն է գործելու: Կանանց մասնակցությունը քաղաքական և
Ա 732 հասարակական կյանքում: Ձեռնարկ կանանց համար / Լիլիթ Ասատրյան,
Դկտ. Հիլի Ջ. Վան դե Ստրիք, Վիտսկի Փոսթմա.
- Եր: «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ, 2021, - 104 էջ:

Ձեռնարկում վերլուծված են ժամանակակից Հայաստանում կանանց մասնակցության սոցիալ-տնտեսական, քաղաքական և քաղաքացիական չափումները: Այն ընդգրկում է կանանց ժողովրդավարական մասնակցությունը պայմանավորող մի շարք գործոնների համակողմանի ուսումնասիրությունները:

Ձեռնարկը միտված է հզորացնելու կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ հայեցակարգային նոր մոտեցումները: Այն նախատեսված է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և կանանց քաղաքական մասնակցության հարցերով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակի համար: Այն կարող է կիրառվել նաև որպես ուսումնական ձեռնարկ միջին մասնագիտական կրթական հաստատություններում և համալսարաններում:

Հայաստանի ազգային գրադարանի համահավաք գրացուցակ:
Այս ձեռնարկի տվյալները գրանցված են համահավաք գրացուցակում և հասանելի են Հայաստանի ազգային գրադարանում:

ՀՏԴ 396:316(07)
ԳՄԴ 66.74+60.5g7

ISBN 978-9939-1-1286-2

© «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ, 2021
© «Էդուարդո Ֆրայ» հիմնադրամ, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՁԵՌՆԱՐԿԻ ՄԱՍԻՆ 8

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 9

ԿԱՐԾԻՔ 10

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ 14

1.1 Կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում 15

1.2 Կանանց հասարակական-քաղաքական մասնակցության իրավական նորմերը Հայաստանի Հանրապետությունում 23

2 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ 30

2.1 Ի՞նչ է մասնակցությունը 31

2.2 Մասնակցության տեսակները 34

2.3 Մասնակցության մակարդակները 35

2.4 Մասնակցության նշանակությունը և արժեքը 43

2.4.1 Մասնակցությունը և ինքնազարգացումը 44

2.4.2 Մասնակցությունը, արդյունավետությունը և կայունությունը 45

2.4.3 Կանանց ներուժն ու հասարակության զարգացումը 45

2.4.4 Մասնակցությունը ժողովրդավարության անբաժանելի մասն է 46

2.5 Ինչպես կազմել ծրագիր (հասարակական-քաղաքական ոլորտում) 47

2.5.1 Ինչպես ընդամենը չորս քայլով հասնել իշխանության. 47

2.5.2 Ձեր ճշմարտացիության հաստատումը. մարդկանց վրա ազդելու 12 մեթոդները .. 49

2.5.3 Քայլ 1. Սահմանե՛ք Ձեր նպատակը 52

2.5.4 Քայլ 2. Սահմանե՛ք ժամանակացույց, քանի որ առանց ժամանակի նպատակը սոսկ երազանք է 52

2.5.5 Քայլ 3. Իրականացրե՛ք շահակիցների (stakeholder) քարտեզագրում 55

2.5.6 Քայլ 4. Բերե՛ք Ձեր փաստարկները 57

3 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ 58

3.1 Ազդեցությունն, թե՞ իշխանություն 58

3.2 Կրկին նպատակի սահմանման մասին 59

3.3 Սահմանե՛ք Ձեր ուղերձը: Կազմե՛ք հանրությանն ուղղված Ձեր խոսքը 60

3.4 Ձևավորե՛ք անձնական իմիջ 60

3.5 Ձևավորե՛ք թիմ 60

3.6 Աշխատե՛ք համայնքի հետ: Աշխատե՛ք կանանց հետ որպես համայնքի 62

3.7 Ձևավորե՛ք և իրականացրե՛ք ընտրարշավ/քարոզարշավ կամ իրազեկման արշավ 63

4 ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԺԿ ԿԱՆԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ 64

4.1 Կանանց քաղաքական մասնակցությունը ԵՄ-ում և Նիդերլանդներում 65

4.2 Կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ օրենսդրությունը 69

4.3 Ինչպես դառնալ քաղաքականապես ակտիվ..... 73

4.4 ԵԺԿ կանանց կազմակերպության և կանանց ազգային կազմակերպությունների համապատասխանությունը..... 77

4.5 Ինչպես ստեղծել կանանց կազմակերպություն..... 83

5 ԿԱՆԱՆՑ ԽՈՍՔԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ..... 88

Արփինե Հովհաննիսյան..... 89

Էլինար Վարդանյան..... 92

6 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՅՈՒԹԵՐ 96

7 ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 98

Լիլիթ Ասատրյան..... 99

Դկտ. Հիլի Ջ. Վան դե Ստրիք..... 100

Վիտսկի Փոսթմա..... 102

Ընթերցողի դատին ենք ներկայացնում «Ժամանակն է գործելու. կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքում» ձեռնարկը, որը հնարավորություն է տալիս գնահատելու կանանց ժողովրդավարական մասնակցության նշանակությունը մեր երկրի քաղաքական համակարգի արդիականացման պայմաններում:

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը և «Էդուարդո Ֆրայ» հիմնադրամը Հայաստանում յոթ տարվա ընթացքում քաղաքականությամբ հետաքրքրվող կանանց համար կազմակերպել են վերապատրաստման դասընթացներ: Կանայք, ովքեր ցանկանում են լսելի դառնալ, մասնակցել քաղաքական գործընթացներին և որոշիչ ձայն ունենալ սեփական համայնքների կայուն զարգացման գործում, այսօր միավորվում են համաշխարհային շարժման մեջ: Դա հեշտ չէ, և բազմաթիվ կանայք Հայաստանում պայքարում են ժողովրդավարական ազդեցության լծակներ ունենալու համար: Դասընթացների և սույն ձեռնարկի միջոցով մենք նպատակ ունենք աջակցելու, ոգեշնչելու և խրախուսելու կանանց, որպեսզի քաղաքակիրթ պայքարի ելնեն՝ պահանջելով քաղաքականության ոլորտում իրենց իրավունքների նկատմամբ ցուցաբերել հավուր պատշաճի հարգանք: Հանրային իշխանության լծակների հավասար իրավունքով տրամադրումը կանանց և տղամարդկանց նշանակում է՝ ունենալ ավելի արդյունավետ կառավարում, ավելի ամուր ժողովրդավարություն և բարգավաճող հասարակություն:

Մեր հիմնադրամները գործակցում են Եվրոպայի քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունների հետ՝ CDU Գերմանիայում և CDA Նիդերլանդներում: «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի գլխավոր գրասենյակը տեղակայված է Գերմանիայում, իսկ մասնաճյուղերը՝ աշխարհի ավելի քան 120 երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: Հիմնադրամը գործում է 1960-ականներից՝ խթանելով ու ամրապնդելով ժողովրդավարությունը: «Էդուարդո Ֆրայ» հիմնադրամը նույն առաքելությունն ունի: Այն հիմնադրվել է Բեռլինի պատի փլուզումից հետո՝ տեղակայվելով մարդասիրության, խաղաղության և արդարադատության մայրաքաղաք Հաագայում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ժամանակն է գործելու. կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքում» ձեռնարկը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակների, մասնավորապես այն կանանց և կանանց խմբերի համար, որոնք ցանկանում են զարգացնել իրենց գիտելիքները ժողովրդավարական մասնակցության և ներկայացվածության ոլորտում և/կամ իրենց առաջին քայլերն են կատարում այդ ուղղությամբ:

Ձեռնարկը խրախուսում է կանանց մասնակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մակարդակներում, ներկայացնում է Հայաստանի Հանրապետության և եվրոպական զարգացած երկրների պատմությունն ու փորձառությունը կանանց ժողովրդավարական ներգրավվածության, մշակվող և իրականացվող քաղաքականության, արդիականացման գործընթացների և կայուն զարգացման վերաբերյալ:

Ձեռնարկը բաղկացած է տեսական և գործնական բաժիններից, ներառում է նաև վարժություններ, հարցադրումներ ու առաջադրանքներ, որոնք կարող են կիրառվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային և թիմային աշխատանքներում:

Մենք հավատում ենք, որ «Ժամանակն է գործելու. կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքում» հանրամատչելի ձեռնարկը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում սոցիալական տարբեր խմբերի, բնակավայրերի, տարբեր մասնագիտություն ու կարողություններ ունեցող կանանց և հատկապես երիտասարդ կանանց ու աղջիկների շրջանում ժողովրդավարական մասնակցության խրախուսմանը:

Մենք նաև հավատում ենք, որ կանանց ակտիվ ներգրավվածությունը մեր երկրի հասարակական-քաղաքական գործընթացներում կարող է երաշխավորել ավելի ապահով, արդար, բարենպաստ իրավիճակ՝ ի շահ մեր պետության, մեր ժողովրդի և մեր քաղաքացիների քաղաքակիրթ ապագայի:

ԿԱՐՕՒՔ

«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի և «Էդուարդո Ֆրայ» հիմնադրամի «Ժամանակն է գործելու. կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքում» կանանց համար ծեռնարկի վերաբերյալ

Եվրոպական ինտեգրման արդի պայմաններում կանանց մասնակցությունը մեր երկրի քաղաքական կյանքին ժողովրդավարական ներկայացուցչության կարևոր որակական բնութագրերից մեկն է: Ակնհայտ է, որ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ներկայացվածության խնդրի ուսումնասիրությունը կարող է օգնել՝ գտնելու և հաստատելու ավելի արդյունավետ կազմակերպչական մոդելներ: Ներկա փուլում Հայաստանն անցնում է համակարգային բարեփոխումների մի ժամանակաշրջան, որի ռազմավարական նպատակն է կառուցել ժողովրդավարական պետություն՝ զարգացած քաղաքացիական հասարակությամբ, տնտեսության և մշակույթի բարձր մակարդակով: Ընթացիկ բարեփոխումներն ազդում են կանանց սոցիալական խմբերի և ՔՀԿ-ների վրա՝ ձևավորելով նրանց վերաբերմունքը հայ հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացների նկատմամբ՝ փոխելով նրանց քաղաքացիական գիտակցությունն ու վարքը:

Համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ սոցիալական խնդիրների նկատմամբ ցիվիլիարխիկ վերահսկողության արդյունավետությունն աճում է, եթե կանանց թիվը պետական կառույցներում առնվազն 30% է: Մեր երկրի համար հասարակության արդիականացման համատեքստում սոցիալական խնդիրների լուծումը դառնում է գերակա խնդիրներից մեկը: Այս տեսանկյունից կանանց քաղաքական գործունեության մակարդակը ցիվիլիարխիկ ժողովրդավարության ցուցիչներից մեկն է:

Կանանց համար ձեռնարկի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ միջազգային հարաբերությունների զարգացման ներկա փուլը բնութագրվում է կանանց առաջնորդության ակտիվացմամբ արևմտաեվրոպական երկրներում: Այս ձեռնարկում վերլուծված են կանանց տեղն ու դերը ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարական կերպափոխումներում, ինչպես նաև գենդերային անհամաչափությունները քաղաքական համակարգի արդիականացման պայմաններում: Վերջին 12 տարիների ընթացքում Եվրոպական Միության Արևելյան Գործընկերության մի շարք պետություններում տեղի են ունեցել արմատական փոփոխություններ կանանց քաղաքական իրավունքների ու ազատությունների պաշտպանության ոլորտում: Տեղին է նշել, որ ԵՄ անդամ երկրներում արձանագրված կանանց քաղաքացիավարական մասնակցության զգալի առաջխաղացումները նպաստել են նաև ԵՄ ԱԼԳ երկրների քաղաքական կյանքում հաշվետվողականության բարձրացմանը, օրենքի գերակայության և սոցիալական արդարության ապահովմանը:

Ժամանակակից Հայաստանի քաղաքական ընտրանին, կուսակցությունները և Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հայտարարում են, որ մեր հասարակության քաղաքական համակարգը կայուն զարգացման բնույթ կստանա այն ժամանակ, երբ բոլոր քաղաքացիները՝ տղամարդիկ և կանայք, ակտիվորեն մասնակցեն մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Չնայած դրան, այնուամենայնիվ, մեր հասարակության քաղաքական կյանքում գենդերային տարբերությունները դրսևորվում են կանանց քաղաքական մասնակցության և ներկայացվածության ցածր ցուցանիշներում: Դա նկատելի է ոչ միայն օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների ղեկավար կազմերում, այլև կուսակցությունների և ՔՀԿ-ների առաջնորդների շարքում տղամարդկանց բացարձակ գերակայությամբ:

Սույն ձեռնարկի տեսական-մեթոդաբանական հիմքը ռացիոնալ ընտրության տեսությունն է, որում կին քաղաքական ակտիվիստները հանդես են գալիս որպես քաղաքականության մեջ ներգրավված բանական դերակատարներ, այդ թվում՝ իրենց քաղաքական կարիերայի ձգտումների իրականացման համար: Ձեռնարկի աղբյուրներն են՝ պաշտոնական և աշխատանքային փաստաթղթերը, ՀՀ, Եվրամիության և միջազգային կազմակերպությունների իրավական ընթացակարգերը, որոնք կարգավորում են ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների գործունեությունը կանանց մասնակցության հասարակական-քաղաքական ոլորտում: Դրանք ձևակերպում են հայեցակարգային հիմքերը և առաջնահերթություններն այս խնդրի լուծման հարցում:

Խնդրի ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը նաև կառուցվածքային-ֆունկցիոնալ մոտեցումներն են, որոնց հիման վրա հնարավոր է դարձել պարզաբանել կանանց ժողովրդավարական մասնակցության և ազդեցության մակարդակների ուսումնասիրման հիմնական սկզբունքները: ԵՄ ինտեգրման քաղաքականության իրականացման առանձնահատկությունները դիտարկվում են իշխանության լեգիտիմության և սոցիալական փոխգործակցության տեսությունների միջոցով, որոնք էլ հնարավորություն են տվել հեղինակներին՝ հայտնաբերել ուսումնասիրվող երևույթի նոր կողմերը և, ի վերջո, առաջարկել խնդրի նոր լուծումներ:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ, հեղինակների կարծիքով, մեզանում գենդերային հավասարությունն ապահովելու և ցիվիլիարխիկ ժողովրդավարացման նոր փուլ մտնելու համար անհրաժեշտ է ինչպես պետության, ՏԻՄ-երի, կուսակցությունների և կանանց ՔՀԿ-ների աջակցությունը, այնպես էլ կանանց՝ քաղաքական գործընթացներին մասնակցելու պատրաստակամությունը: Այս առումով կարևոր է, որ կանայք հասարակության մեջ հարգանքի և ճանաչման հասնելու մեծ ցանկություն հայտնեն ոչ միայն հայտարարություններով, այլև կոնկրետ քայլերի գալով ու ակտիվությունն ավելացնելով:

Կարևորելով ձեռնարկում առկա հեղինակային մոտեցումները՝ կցանկանայի նշել, որ այն ամփոփ ու ավարտուն աշխատություն է և լիովին արժանի է ներկայացնելու ընթերցողների լայն շրջանակների դատին:

Աշոտ Ալեքսանյան
Քաղաքական գիտությունների դոկտոր,
քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր

Եթե աշխատասեր ես, նպատակասլաց և գիտելիքահեն, ապա առաջընթացի հաջողությունն ապահովված է:

CHRISTINA
BELLMANN
MONIQUE
VOGELAAR

Պատմությունը ցույց է տալիս, որ կանայք արդյունավետ կերպով միշտ համախմբվել են հասարակության առջև ծառացած խնդիրների շուրջ, աղետների ու բարդ իրադրությունների լուծման համար, հայրենիքի համար օրհասական և դժվարին պահերին, նախաձեռնել են խնդիրների լուծման գործողություններ և հանդես են եկել միասնականությամբ:

Դեռևս 1918-1920թթ. Հայաստանի Հանրապետությունում կանայք ունեցել են ոչ միայն ընտրելու, այլև ընտրվելու իրավունք: Այսպիսով՝ չորս կին պատգամավորներ իրենց քաղաքական գործունեությունն են վարել Հայաստանի Հանրապետության խորհրդարանում:

Ընդունված է համարել, որ աշխարհում առաջին կին դիվանագետը եղել է ազգությամբ հայ՝ գրող և հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Դիանա Աբգարը, ով 1919-1920թթ. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչն էր Ծայրագույն Արևելքում՝ Ճապոնիայում:

Կանայք անմասն չեն մնացել երկրի հասարակական-քաղաքական կյանքում նաև խորհրդային տարիներին: Սակայն, ինչ խոսք, այդ ժամանակաշրջանում մեծ դեր է ունեցել խորհրդային կարգերի գաղափարախոսությունը, համաձայն որի՝ շատ հաճախ այդ մասնակցությունը առաջնահերթորեն ապահովում էր ոչ թե որակ, այլ զուտ մասնակցություն՝ որպես թվային ցուցանիշ: Կանայք ներկայացված էին բոլոր ոլորտներում, ըստ համամասնության՝ շատ դեպքերում պարզապես ապահովելով զուտ ներկայություն: Այս համատեքստից, իհարկե, դուրս էին գործադիր բարձրագույն մարմիններում գործունեություն ծավալելու օրինակները, որտեղ հասնելու համար, բնականաբար, անհրաժեշտ էր «թրծվել» կոմունիստական կուսակցության դարբնոցում: Սրա հետ մեկտեղ, խորհրդային կարգերի պայմաններում, հասարակական ոլորտում խթանվեց կանանց հասարակական կազմակերպությունների ստեղծման գործընթացը՝ այդպիսով ևս ապահովելով կանանց ներկայացվածությունն ու մասնակցությունը երկրում, հասարակական կյանքում:

1.1 ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1991թ.-ից ի վեր Հայաստանի Հանրապետությունում կանանց հասարակական-քաղաքական մասնակցությունը եղել և մնում է պետության կարիքներից և օրակարգային ընթացիկ հարցերից մեկը: Թե ինչու նաև որպես կարիք, կքննարկենք այս ձեռնարկի մյուս բաժիններում:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո հասարակության կողմից վերանայվեցին և վերաարժևորվեցին մի շարք, այդ թվում նաև ազգային, հոգևոր, մշակութային, ավանդական արժեքներ: Այս առումով առավել ընդգծվեց նաև կանանց մասնակցության հարցը. կարևորվեց կանանց մասնակցությունը հասարակության տարբեր ոլորտներում՝ ինչպես հասարակական, քաղաքական, այնպես էլ տնտեսական և մշակութային: Սակայն կանանց մասնակցությունը դեռևս շարունակում է մնալ ոչ բավարար մակարդակի վրա:

Թեև կանանց՝ քաղաքականության մեջ ներգրավվելու խրախուսման նպատակով վերջին տարիներին ներդրվել է քվոտայի համակարգ, այնուամենայնիվ, օրենսդիր և գործադիր իշխանություններում կանանց ներկայացվածությունը շարունակում է մնալ ոչ բավարար մակարդակի վրա: Նկատելի է նաև, որ կին քաղաքական գործիչների շրջանում շատ քիչ են կանանց խնդիրները բարձրաձայնողները: Քաղաքական կուսակցությունները նույնպես հաճախ բավարար չափով չեն զբաղվում այս հարցերով՝ չնայած կանանց կուսակցական կառույցների առկայությանը:

Կանայք ավելի մեծ թվով են ներկայացված հանրային ոլորտի օժանդակող և ոչ ղեկավար պաշտոններում: Կանայք նաև դեռևս ամբողջական չափով ներկայացված չեն մարզային և քաղաքային այն վարչական մարմիններում, որոնք սահմանում են գերակայությունները տեղական մակարդակում և ներգրավված են զարգացման ծրագրերի իրականացման աշխատանքներում:

Ի տարբերություն վերը նշվածի՝ կանայք ավելի մեծ ներգրավվածություն ունեն տեղական ինքնակառավարման մակարդակում, աճել է կանանց թիվը տեղական ինքնակառավարման խորհուրդներում (ավագանիներ):

Սրա պատճառներից մեկն այն է, որ գյուղական համայնքներից տղամարդկանց միգրացիայի ծավալները վերջին տարիներին այնքան մեծ են, որ կանայք այլընտրանք չեն ունենում և աշխատանքի են անցնում տեղական ինքնակառավարման մարմիններում: Պատճառներից են նաև կանանց կարողությունների բավարար չափով զարգացումը և համայնքային խնդիրների լուծման գործում ներդրում ունենալու պատրաստակամությունը: Ամեն դեպքում, կանանց ներգրավվածությունը համայնքի մակարդակում որոշումներ կայացնելու գործընթացում կարևոր քայլ է դեպի ավելի մեծ մասնակցության ապահովումը քաղաքական ոլորտի ավելի բարձր մակարդակներում: Այդպիսի ներգրավվածությունը անհրաժեշտ է շարունակաբար խրախուսել ոչ միայն համապատասխան օրենսդրական նախաձեռնությունների, այլև պետական և հասարակական ոլորտի կողմից իրականացվող հատուկ ծրագրերի միջոցով, որոնք կնպաստեն կանանց կարողությունների զարգացմանը քաղաքականություն մուտք գործելու ճանապարհին:

Ներկայումս Հայաստանում կանանց հասարակական մասնակցությունն ավելի բարվոք վիճակում է, քան քաղաքական մասնակցությունը: Այս ձեռնարկում մենք չենք անդրադառնում կանանց տնտեսական և մշակութային մասնակցությանը, որոնցից յուրաքանչյուրը մեկ առանձին ընդարձակ թեմա է: Միայն նշենք, որ կանանց տնտեսական մասնակցությունը, որը խրախուսում է կանանց շրջանում ձեռնարկատիրական գործունեությունը, խոշոր հաշվով, առաջնային կերպով նպաստում է կանանց և նրանց ընտանիքների սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունությանն ու ինքնավստահության և ինքնագնահատականի բարձրացմանը, ինչն էլ իր հերթին ավելի է արժևորում կանանց դերը հանրային տարբեր ոլորտներում: Ընդգծենք նաև, որ կանանց տնտեսական մասնակցությունը շատ կարևոր է տնտեսության զարգացման՝ ՀՆԱ-ի (համախառն ներքին արդյունք) աճի տեսանկյունից:

Ե՛վ հասարակական, և՛ քաղաքական ոլորտներում կանանց մասնակցության տեսանկյունից, ի թիվս այլ թերացումների, դեռևս դիտարկվում է մեկ կարևոր խոչընդոտ ևս՝ համագործակցության և ցանցային գործունեություն ծավալելու ընթացքում առաջացող բարդությունը:

Հաճախ միևնույն ոլորտի կառույցները չեն կարողանում կամ չեն ցանկանում համագործակցել՝ մրցակցային պատճառներով: Սակայն այստեղ էլ պետք է գիտակցել, որ համագործակցության արդյունքում ավելի շահեկան վիճակում են հայտնվում բոլոր կողմերը, երբ կարողանում են համադրել իրենց ռեսուրսներն ու ներուժը: Թույլ կողմերից են նաև դեռևս ոչ բավարար չափով պետական-մասնավոր համագործակցության (public-private partnership) մոդելի կիրառումը և դրա կիրառման համար համապատասխան հմտությունների անբավարար մակարդակը: Այնուամենայնիվ, կարող ենք արձանագրել, որ հասարակական կազմակերպությունները հիմնականում արժեքավոր ծառայություններ են մատուցում կանանց (օրինակ՝ կանանց քաղաքական մասնակցության խրախուսում, կանանց ձեռներեցության զարգացման ծրագրերի իրականացում և այլն):

Այս ուղղությամբ իրականացվում են կարողությունների զարգացման տարբեր ծրագրեր, իրազեկման արշավներ, հետազոտություններ և հարցումներ, այլ ծրագրեր և միջոցառումներ:

Թե ինչու է անհրաժեշտ կանանց ակտիվ մասնակցությունը նշված բոլոր ոլորտներում՝ քաղաքական, հասարակական, տնտեսական և մշակութային, և թե որն է դրա կարիքը, կարող ենք նշել հետևյալը՝ ՀՀ-ում կանայք կազմում են բնակչության կեսից ավելին (52,8%՝ համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների), համեմատական առումով մեծ է նաև կանանց ներգրավվածությունը միջին մասնագիտական և բարձրագույն կրթության գործընթացներում: Կանանց ոչ բավարար չափով մասնակցությունը պետության զարգացման գործընթացներին տարբեր ոլորտներում հանգեցնում է մարդկային և մասնագիտական ռեսուրսների ոչ բավարար չափով կիրառմանը, որի արդյունքում տուժում է պետությունը, նաև ընտանիքը: Ահա թե ինչու է անհրաժեշտ խրախուսել կանանց մասնակցությունը: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է, որ կանայք լինեն ավելի նախաձեռնող և ի նպաստ պետության շահերի ծառայեցնեն իրենց ներուժը՝ գիտելիքները, մասնագիտական կարողությունը և փորձառությունը:

Հասարակության որոշ շերտերում, ցավոք, դեռևս գերակշռում է այն կարծիքը, որ կանանց մասնակցությունը քաղաքական, հասարակական (և այլ) ոլորտներում հակակշռում է ընտանեկան ավանդույթներին, և որ կանայք ստիպված են ընտրություն կատարել ընտանիքի և հասարակական-քաղաքական (կամ այլ) գործունեության միջև: Սակայն բազմաթիվ օրինակներ ցույց են տալիս, որ կանանց հասարակական-քաղաքական մասնակցությունը չի կարող խանգարել «ընտանիք» ազգային հայեցակարգին, և որ հաճախ դրանք փոխլրացնում և ուժեղացնում են իրար: Մեր ձեռնարկի մոտեցումը ևս այն է, որ կնոջ համար «հասարակական-քաղաքական մասնակցություն» և «ընտանիք» հայեցակարգերը պետք է համադրվեն և ոչ երբեք հակադրվեն:

Այսպիսով, այս հանրամատչելի ձեռնարկը նպատակ ունի խրախուսելու կանանց հասարակական-քաղաքական մասնակցությունը: Այն նախատեսված է այն կանանց համար, որոնք ցանկանում են իրենց առաջին քայլերն անել այդ ուղղությամբ:

ՀՀ գլխավոր իրավական փաստաթուղթը ՀՀ Սահմանադրությունն է: ՀՀ Սահմանադրությունը ՀՀ իրավական համակարգի հիմքն է՝ երկրի հիմնական օրենքը, որին պետք է համապատասխանեն բոլոր մյուս օրենքներն ու իրավական փաստաթղթերը: Սահմանադրությունը նաև արժեքաբանական-գաղափարական փաստաթուղթ է, որը սահմանում է հասարակության կազմակերպման ամենահիմնական սկզբունքները, որոնց գործնական կիրառմանը և ամրապնդմանը պետք է ձգտի պետությունը:

ՀՀ Սահմանադրությունը, որն ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին հանրաքվեի արդյունքում, երկու անգամ ենթարկվել է փոփոխությունների, որոնցից առաջինը կատարվել է 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով, իսկ երկրորդը՝ վերջինը, կատարվել է 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 2.
ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 30.
Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը

Կանայք և տղամարդիկ իրավահավասար են:

Հոդված 48.
Ընտրական իրավունքը և հանրաքվեին մասնակցելու իրավունքը

1. Ազգային ժողովի ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք:
2. Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:
3. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն ընտրության կամ հանրաքվեի օրը տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:
4. Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

ԳԼՈՒԽ 3.
ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հոդված 86.
Պետության քաղաքականության հիմնական նպատակները

Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝

1) գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.
2) բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը.
3) բնակարանային շինարարության խթանումը.
4) կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը.
5) ծնելիության և բազմազավակության խթանումը.
6) երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը.
7) բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը.
8) հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամների առողջության վերականգնման ծրագրերի իրականացումը, հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը.
9) սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողությունը.
10) տարածքային համաչափ զարգացումը.

11) ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը.
12) քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը.
13) անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումը.
14) հիմնարար և կիրառական գիտության զարգացումը.
15) ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստելը.
16) բարեգործության խթանումը՝ մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

Անկախությունից ի վեր Հայաստանի Հանրապետության կառավարությունը ազգային օրենսդրության մեջ կայուն կերպով ներառել է գենդերային հավասարության մասին միջազգային նորմատիվային-իրավական բազան, և ընդունվել են մի շարք օրենքներ ու քաղաքականություններ՝ գենդերային անհավասարությունները հաղթահարելու նպատակով: 1998 թվականին ՀՀ կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման ծրագրի հիմնադրույթների մասին» թիվ 242 որոշումը և «Հայաստանի Հանրապետությունում 1998-2000 թվականներին կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 406 որոշումը: 2004թ. ապրիլին ՀՀ կառավարությունն ընդունել է կանանց վիճակի բարելավման առաջին ազգային գործողությունների ծրագիրը և, այդ ժամանակից սկսած, ավելացրել է ջանքերը երկրում գենդերային անհավասարությունների կրճատման գործում ներդրում ունենալու ուղղությամբ:

Հիմնական փաստաթուղթը, որն արտացոլում է գենդերային հավասարության քաղաքականության նկատմամբ Հայաստանի ընթացիկ պարտավորությունը, ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգն է, որին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել 2010թ. փետրվարին (ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգ, 2010թ.): Գենդերային քաղաքականության հայեցակարգի նպատակը սոցիալ-քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում և կառավարության բոլոր մակարդակների քաղաքականություններում գենդերային խթանման համակարգումն է՝ որպես հասարակության մեջ կայուն ժողովրդավարական զարգացում ապահովելու, ժողովրդավարական, բաց ու արդար քաղաքացիական հասարակությանը համախմբելու, պետության մեջ օրենքի իշխանությունն ամրապնդելու գործիք:

2019 թ. սեպտեմբերի 19-ին ընդունվել են Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023թթ. ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը: Ծրագրով սահմանվում են գենդերային քաղաքականության առաջնահերթ ուղղությունները, որոնց նպատակը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծումն է՝ հաշվի առնելով նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները:

Գենդերային քաղաքականության իրականացման և չհավասարակշռված իրավունքների ու հնարավորությունների խնդիրներին անդրադառնալու համար մեծ նշանակություն ունի «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 2013թ.: Այն կարգավորում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովմանն առնչվող խնդիրները քաղաքականության, հանրային կառավարման, աշխատանքի ու զբաղվածության, ձեռներեցության, առողջապահության ու կրթության բնագավառներում:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի կողմից 2010 թվականին սահմանված առաջարկություններին համահունչ՝ 2015 թվականի դեկտեմբերին ՀՀ Սահմանադրության մեջ կատարված լրացումներն ու փոփոխությունները ներառել են կարևոր հոդվածներ և դրույթներ, ինչպիսիք են՝ «Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը» (Հոդված 28), «Խտրականության արգելքը» (Հոդված 29) և «Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը» (Հոդված 30):

Անեկ Դուսբուրգ՝ «Էդուարդո Ֆրայ» հիմնադրամի (ԷՖՀ) փորձագետ

Քրիստինա Բելման՝ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ (ԿԱՀ)

Մոնիկ Վոգելար՝ «Էդուարդո Ֆրայ» հիմնադրամի (ԷՖՀ) փորձագետ

«Պեկին+20»-ի և Կայուն զարգացման նոր նպատակների սահմանման համատեքստում ՀՀ կառավարությունը 2015թ. սեպտեմբերին գենդերային հավասարության ու կանանց հնարավորությունների ընդլայնման թեմայով համաշխարհային առաջնորդների հանդիպմանը պարտավորություն է ստանձնել ապահովելու «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների մասին» ՀՀ օրենքի արդյունավետ կիրարկումը:

Քանի որ կանայք բավարար չափով ներկայացված չեն Կառավարությունում և որոշումների կայացման գործընթացներում, այդ թերացումը մեղմելու գործիքներից մեկը հատուկ ժամանակավոր միջոցների ձեռնարկումն է:

Հայաստանում այդպիսի գործիք է կանանց համար քվոտաների ներդրումը ԱԺ ընտրություններում քաղաքական կուսակցության ցուցակներում, որն առաջին անգամ 5%-ով ներմուծվել է 1999թ.-ին և այնուհետև 2007թ.-ին բարձրացվել մինչև 15% և 2011թ.-ին՝ 20%:

Քվոտաների ներդրմամբ արձանագրվեց դրական, թեև սահմանափակ և հաճախ նաև ոչ արդյունավետ ազդեցություն կանանց քաղաքական ներկայացվածության բարձրացման մեջ: 2016թ. մայիսի 25-ին ընդունված նոր Ընտրական օրենսգիրքը պահանջում է, որ նույն սեռի ներկայացուցիչների առնվազն 30%-ը ներառված լինի քաղաքական կուսակցության ցուցակներում ազգային և տեղական ընտրությունների համար:

Այնուամենայնիվ, այլ ոլորտների համար քվոտաներ չկան, ինչպես օրինակ՝ Կառավարության, քաղաքացիական ծառայության, տարածքային կառավարման և տեղական կառավարությունների, ինչպես նաև բիզնես ոլորտի համար:

ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է.

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ, ԲԱԺԻՆ 4.
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԳԼՈՒԽ 14.
ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հոդված 83.
Կուսակցության (կուսակցությունների դաշինքների) համապետական և տարածքային ընտրական ցուցակները

4. Կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի համապետական ընտրական ցուցակի առաջին մասում առաջին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում (1-3, 1-6, 1-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70%-ը: Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) համապետական ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկվում է ոչ պակաս, քան 80, և ոչ ավելի, քան 300 թեկնածու: Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) համապետական ընտրական ցուցակի առաջին մասում կարող են ընդգրկվել նաև այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցություններից որևէ մեկի) անդամ չհանդիսացող անձինք, որոնց թիվը չի կարող գերազանցել համապետական ընտրական ցուցակի առաջին մասում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թվի 30%-ը:

Սույն ձեռնարկը նպատակ ունի խրախուսելու կանանց մասնակցությունը հասարակական-քաղաքական ոլորտում և կոչված է լրացնելու կանանց մասնակցության խնդրի վերաբերյալ ուսուցողական նյութերի բացը:

Ձեռնարկը համակողմանիորեն հիմնավորում է մասնակցության նշանակությունն ու արժեքը՝ տրամադրելով այդ գործընթացի ապահովման սկզբունքները, ներկայացնելով դրսևորման ոլորտները և առաջադրվող էթիկայի խնդիրները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խորհրդարանում կանանց ավելի մեծ թիվն ընդհանուր առմամբ նպաստում է կանանց խնդիրների նկատմամբ ավելի մեծ ուշադրությանը: Կանանց քաղաքական մասնակցությունը գենդերային հավասարության և իրական ժողովրդավարության հիմնարար նախապայմաններից է: Այն խթանում է կանանց անմիջական ներգրավումը հասարակական և քաղաքական որոշումների կայացման գործընթացում և կանանց առջև ավելի լավ հաշվետվողականություն ապահովելու միջոց է:

Կանանց նկատմամբ քաղաքական հաշվետվողականությունը սկսվում է որոշում կայացնող պաշտոններում կանանց թվի ավելացմամբ, բայց դրանով չի սահմանափակվում: Պարբերաբար պահանջվում է իրականացնել օրենսդրական բարեփոխումներ, որոնք իրենց հերթին կնպաստեն առավել արդյունավետ քաղաքականության իրականացմանը՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը խրախուսելու և դրա իրականացումը ապահովելու հարցում:

Մասնավորապես, ՄԱԿ-ի կանանց կազմակերպության (UN Women) գործունեության հիմնասյուներից մեկը կանանց քաղաքական մասնակցության և արդյունավետ կառավարման խթանումն է՝ որոշումների կայացման գործընթացները մասնակցային, պատասխանատու, արդար և ներառական չափանիշներով ապահովելու համար:

Կանանց աջակցություն է ցուցաբերվում նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (CEDAW) շրջանակում, որն այժմ վավերացված է աշխարհի կառավարությունների մեծամասնության կողմից, այդ թվում նաև ՀՀ կառավարության կողմից՝ գենդերային հավասարությունը որպես իրավական երաշխիք դիտարկելու համար: Կանանց նկատմամբ խտրականության պայքարից բացի՝ մեկ այլ ռազմավարություն է համատեղ և ներդաշնակ աշխատանքը բազմաթիվ շահագրգիռ կողմերի հետ, ինչպիսիք են կանանց կազմակերպությունները, կառավարությունները, ՄԱԿ-ի համակարգը, այլ միջազգային կառույցներ, նաև մասնավոր հատվածը՝ ավելի շատ կանանց ներգրավելու համար քաղաքականության մեջ, վերապատրաստելու կին առաջնորդների, զարգացնելու կանանց հմտությունները որպես թեկնածուների և ընտրողների, խրախուսելու նրանց ակտիվ մասնակցությունը ընտրություններին:

Մասնակցությունն ինքնին կայուն հասկացություն չէ, և ժամանակի ընթացքում սոցիալական գիտության ու քաղաքացիական գործընթացների զարգացմանը զուգահեռ փոխվել և զարգացել են նաև նրա ընկալումները: Ժողովրդավարությունն ու կառավարումն առաջին հիմնական հարթությունն են, որոնց միջոցով դիտարկվում է մասնակցությունը: Քաղաքագիտական տեսություններում մասնակցությունը նեղ իմաստով սահմանափակվում է ընտրություններին մարդկանց քվեարկելու գործընթացով, իսկ ավելի լայն առումով այն դիտարկվում է որպես հանրության մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացներին:

Հետագայում իր զարգացումն է ստանում նաև «մասնակցային ժողովրդավարություն» (participatory democracy) հասկացությունը: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի 2002թ. համաշխարհային զարգացման զեկույցում հստակ ընդգծվել է, որ պետությունները կարող են ապահովել մարդկային զարգացումը «բոլորի համար», միայն երբ կունենան այնպիսի ժողովրդավարական կառավարման համակարգ, որը հաշվետու լինելով հանրության բոլոր անդամներին՝ ապահովում է մարդկանց մասնակցությունն իրենց կյանքին վերաբերող հարցերի քննարկումներին և որոշումների ընդունմանը:

ԱՌԱՋԱՐԿԵՔ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՐ ԲԱՆԱՁԵՎԸ, ՈՐՆ ԱՌԱՎԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՀՀ-ՈՒՄ ԱՌԿԱ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ:

Ընդհանուր առմամբ,
կարող ենք առանձնացնել մասնակցության հետևյալ տեսակները՝

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ:

Հասարակական մասնակցության ձևերից է գործունեությունը քաղաքացիական հասարակության կառույցներում (ՀԿ-ներ, միավորումներ և այլն), նաև ոչ ֆորմալ կառույցներում (ցանցեր, կոալիցիաներ, նախաձեռնող խմբեր):

Քաղաքական մասնակցության ձևերից են ընտրությունները տեղական ինքնակառավարման և հանրապետական նշանակության ընտրություններում, մասնակցությունը օրենսդիր և գործադիր իշխանություններում:

Տնտեսական մասնակցության ձևերից է ձեռներեցությամբ զբաղվելը: Այսօր ՀՀ-ում մեծ թափ է առել և խրախուսվում է կանանց ձեռներեցության զարգացումը հիմնականում միկրո, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման միջոցով: Կանանց տնտեսական մասնակցությունը նպաստավոր պայման է երկրի տնտեսական զարգացման, համախառն ներքին արդյունքի ստեղծման կարևոր գործընթացում: Մյուս կողմից՝ տնտեսական մասնակցությունը կանանց համար կարևոր խթան է ինքնավստահության բարձրացման, ֆինանսական կայացման և մյուս ոլորտներում ևս մասնակցություն ունենալու համար:

Մշակութային մասնակցության ձևերից է մասնակցությունը մշակութային ոլորտի գործունեությանը՝ ոլորտում գործունեություն ծավալող ֆորմալ կամ ոչ ֆորմալ հաստատությունների միջոցով:

Անհատի կամ խմբի, կազմակերպության մասնակցությունը տարբեր գործընթացներում և տարբեր ժամանակներում կարող է տարբեր լինել: Ոչ ոք չի կարող լիովին

Մասնակցության մակարդակները սահմանվում են տարբեր ձևերով՝ տեղականից մինչև միջազգային: Առանձնացվում են նաև ակտիվ և պասիվ մասնակցության տեսակներ, որոնք բնորոշ են բոլոր մակարդակներին, անհատներին և խմբերին:

ներգրավված լինել ամեն ինչում, ամեն տեղ և առավել ևս՝ միևնույն ժամանակ: Դուք ինքներդ եք որոշում կայացնում, թե որ իրադարձությանն ավելի մեծ մասնակցություն ունենաք կամ ինչ իրադարձություն ուղղակի դիտարկեք և մասնակցություն չունենաք:

Ակտիվ մասնակցությունն այլ կերպ կարող ենք անվանել նաև գիտակցված մասնակցություն: Սա այն տարբերակն է, երբ յուրաքանչյուրը գիտակցում է, թե ինչ քայլեր է ձեռնարկում ակնկալվող արդյունք ապահովելու համար, ինչ ծրագրեր ու միջոցառումներ է կազմակերպում կամ ինչպես է մասնակցում ուրիշների կողմից կազմակերպված միջոցառումներին: Ակտիվ կամ գիտակցված մասնակցության դեպքում Դուք որոշակի ձևով կրում եք պատասխանատվություն այն իրադարձության և դրա արդյունքի համար, որը նախաձեռնել եք կամ որին մասնակցում եք:

Ակտիվ մասնակցության ժամանակ Դուք հնարավորություն եք ունենում նաև ներկայացնելու Ձեր կարծիքը, առաջարկները, ծավալում եք երկխոսություն կամ բանավեճ: Դուք նաև պատրաստ եք լինում լսելու ուրիշների կարծիքները:

Պասիվ մասնակցությունը տեղի է ունենում ոչ Ձեր ակտիվ ներգրավմամբ կամ նույնիսկ առանց Ձեր ուղղակի մասնակցության: Սակայն նույնիսկ այդ դեպքում Ձեր կողմից իրականացվող որոշակի գործողություն կարող է ազդել որևէ իրադարձության արդյունքի վրա: Պասիվ մասնակցության ժամանակ Ձեր աջակցությունն անմիջական չի լինում, բայց լինում է շատ նշանակալից:

ՀԻՇԵ՛Ք ՕՐԻՆԱԿՆԵՐ ՁԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ, ԵՐԲ ԴՈՒՔ ԱՆՁԱՄԲ ԿԱՄ ՁԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՑԱԲԵՐԵԼ ԵՔ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ: ՆՇԵ՛Ք, ԹԵ ԴԱ ԻՆՉ ԼՈՒԾՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԵԼ:

ՀԻՇԵ՛Ք ՕՐԻՆԱԿՆԵՐ ՁԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ, ԵՐԲ ԴՈՒՔ ԱՆՁԱՄԲ ԿԱՄ ՁԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՑԱԲԵՐԵԼ ԵՔ ՊԱՍԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ: ՆՇԵ՛Ք, ԹԵ ԴԱ ԻՆՉ ԼՈՒԾՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԵԼ:

Բերենք օրինակներ

Եթե մասնակցում եք իրավիճակի փոփոխության նպատակով կազմակերպված հանրահավաքի կամ քննարկման, եթե կազմակերպում եք ստորագրահավաք կամ հանդես եք գալիս ելույթներով, եթե նախաձեռնում եք այլ հստակ գործողություններ, ապա Դուք ակտիվ մասնակցություն եք ունենում տվյալ գործընթացի մեջ:

Եթե Ձեր ընտանիքի անդամը ունի Ձեր խրախուսանքը՝ մասնակցելու հանրային միջոցառման, օրինակ՝ հանրահավաքի, ապա սա Ձեր կողմից պասիվ մասնակցության տարբերակ է, քանի որ Դուք ինքներդ չեք մասնակցում: Սակայն նույնիսկ Ձեր նման-օրինակ պասիվ մասնակցությունը կարևոր է, քանի որ, ի վերջո, եթե լինեն հանրահավաքին հաջորդող ընտրություններ, ապա Դուք Ձեր դիրքորոշումը արտահայտելու եք քվեարկության միջոցով: Կամ եթե Դուք Ձեր գործընկերների, հարևանների կամ ընկերների շրջանում զրույցի ընթացքում կողմ կամ դեմ եք արտահայտվում Ձեր համայնքապետարանի կողմից վերջերս ընդունված կանոնակարգին, ապա Դուք դեռևս դրսևորում եք պասիվ մասնակցություն: Բայց Դուք ամեն դեպքում արտահայտում եք Ձեր կարծիքը, որը հետագայում մեկ այլ ձևով կդրսևորվի Ձեր վարքագծում:

Եթե Դուք դեռևս չեք դրսևորում ակտիվ մասնակցություն, ապա պասիվ մասնակցություն ունենալը ևս շատ կարևոր է, եթե չասենք՝ նույնիսկ անհրաժեշտ: Ինչո՞ւ: Որովհետև ոչ ոք երբեք չի կարող ամենուրեք ցուցաբերել միայն ակտիվ մասնակցություն: Պասիվ մասնակցությունը ևս կարևոր է: Չէ՞ որ արդեն իսկ ցուցաբերած պասիվ մասնակցության շնորհիվ Դուք որոշում կայացնելու վճռականություն եք դրսևորում, որն էլ կարող է արտահայտվել, օրինակ՝ քվեարկության միջոցով: Այսինքն՝ այն քաղաքացիները, ովքեր իրենց մասնակցությունն են ցուցաբերում զուտ որպես քվեարկողներ ընտրությունների ժամանակ՝ կատարելով իրենց քաղաքացիական պարտքը, շատ կարևոր գործառույթ են իրականացնում՝ արդյունքում նպաստելով որոշումների կայացմանը, իրավիճակի բարելավմանը կամ հակառակը՝ վատթարացմանը: Այսպիսով տեսնում եք, թե ինչքան կարևոր է ընտրություններին Ձեր մասնակցությունը:

Բերենք մեկ այլ օրինակ

Եթե Դուք սպանում եք ուսումնառություն որոշակի մասնագիտությամբ, թվում է, թե սա միայն Ձեր անձի ապագային միտված գործողություն է: Սակայն սա ևս Ձեր պասիվ մասնակցության փարբերակ է, քանի որ հետագայում Դուք Ձեր մասնագիտության շնորհիվ զարգացնելու եք կամ փոփոխություն եք ապահովելու համապատասխան ոլորտում՝ բարելավելով այն:

Շատ հաճախ հնչում են կարծիքներ և արդարացումներ, երբ կանայք (և ոչ միայն) ասում են, որ ընտրությունների ընթացքում քվեարկությանը չեն մասնակցում, քանի որ իրենց մեկ ձայնը ոչինչ փոխել չի կարող: Մենք հավատում ենք, որ այժմ Դուք ավելի շատ եք կարևորում Ձեր մեկ ձայնը և վստահ եք, որ այն կարող է շատ բան փոխել, բարելավել իրավիճակը ոչ միայն Ձեզ, այլև Ձեզ շրջապատողների համար:

Ձախից աջ՝
Աշխեն Բեգլարյան՝ ԿԱՀ փորձագետ,
Լիլիթ Մկրտչյան՝ ԿԱՀ փորձագետ,
Քրիստինա Բելման՝ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ (ԿԱՀ),
Համիկ Ղազարյան՝ միջոցառման մասնակից,
Վիմ Այլերինգ՝ «Էդուարդո Ֆրայ» հիմնադրամի (ԷՖՀ) փորձագետ,
Էսթեր Քեյզեր՝ «Էդուարդո Ֆրայ» հիմնադրամի (ԷՖՀ) փորձագետ:

Ելնելով ակտիվ և պասիվ մասնակցության ձևերից, հատկապես քաղաքական մասնակցության մեջ անհատի և խմբի կամ կազմակերպության տեսանկյունից, կարող ենք առանձնացնել նաև հետևյալ մասնակցային ձևերը:

- Արձագանքում իրավիճակին (դրական կամ բացասական), որը բխում է որոշակի գործողությունից: Օրինակ՝ որոշակի օրենք շրջանառության մեջ դնելուց հետո Դուք՝ որպես անհատ կամ Ձեր խմբով, արտահայտում եք Ձեր կարծիքը և դիմում եք համապատասխան գործողությունների, ինչպիսիք կարող են լինել Ձեր համախոհների հավաքագրումը, մամլո ասուլիսները, պաշտպանող կամ քննադատող ելույթները:

- Գործողության իրականացում իրավասությունների որոշակի փոխանցմամբ: Օրինակ՝ ընտրությունների, հանրաքվեի և այլ իրավասությունների միջոցով Դուք արտահայտում եք Ձեր կարծիքը՝ քվեարկելով կողմ կամ դեմ:

- Համագործակցություն քաղաքական ուղղվածություն ունեցող կազմակերպությունների հետ: Օրինակ՝ քաղաքական կուսակցությունների, արհմիությունների, քաղաքական նախաձեռնող խմբերի միանալով՝ իրականացնում եք Ձեզ կամ Ձեր խմբին հուզող հարցերի լոբբինգը (շահերի պաշտպանություն):

- Մասնակցություն հասարակական կազմակերպությունների, նախաձեռնող հասարակական խմբերի և զանգվածային լրատվամիջոցների գործողություններին: Այս ոլորտում Դուք համագործակցում եք չորրորդ իշխանության հետ, որը շատ կարևոր է:

ՔՆՆԱՐԿԵ՛Ք, ԹԵ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՊԵՍ ՈՐ ՁԵՎՆ Է ՁԵՋ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՎ ԿԻՐԱՌԵԼԻ: ԻՆՉՈ՞Ւ:

Մասնակցության մակարդակները

Եթե սկզբնական կամ ամենացածր մակարդակը սահմանենք անձնական մակարդակը, ապա որպես ամենաբարձր մակարդակ կարող ենք սահմանել գլոբալ մակարդակը:

- Անձնական մասնակցություն. այն միայն Ձեզանով պայմանավորված մասնակցությունն է: Օրինակ՝ Ձեր ուսումնառության գործընթացը կամ աշխատանքային գործունեությունը: Այս մակարդակում Դուք ինքներդ եք պատասխանատու Ձեր ծրագրերի նախագծման, դրանց իրականացման, Ձեր ձեռքբերումների համար:

- Համայնքային մասնակցություն. այս մակարդակում Դուք համագործակցում եք Ձեր համայնքի այլ ներկայացուցիչների հետ: Համայնք կարող է համարվել Ձեր քաղաքը, գյուղը, ուսումնական հաստատությունը, աշխատանքի վայրը, ընկերական շրջապատը, համախոհների խումբը և այլն:

- Մարզային մասնակցություն. մասնակցության այս մակարդակը շատ բնորոշ է Հայաստանին և պայմանավորված է մարզային առանձնահատկություններով: Օրինակ՝ մարզային ընտրություններին կամ տվյալ մարզին բնորոշ ամենամյա փառատոնին մասնակցությունը, բնապահպանական խնդիրների վերաբերյալ մարզային քննարկման նախաձեռնումն ու իրականացումը և այլն:

- Ազգային/հանրապետական մասնակցություն. մասնակցության այս մակարդակն առնչվում է ողջ երկրին: Օրինակ՝ մասնակցություն համապետական ընտրություններին, համապետական քարոզարշավի իրականացում, համապետական գիտաժողովի անցկացում և այլն:

- Տարածաշրջանային մասնակցություն. այս մակարդակում մասնակցությունը տեղի է ունենում տարածաշրջանային գործընկերների ներգրավմամբ: Օրինակ՝ Արևելյան գործընկերության ծրագիրը, որի անդամ են Եվրոպական միության անդամ պետություններն ու Եվրոպական միության վեց արևելյան հարևանները, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետությունը, հնարավորություն է տալիս բոլոր այդ երկրների մասնակցությամբ համատեղ ծրագրեր մշակելու և իրականացնելու:

- Եվրոպական մասնակցություն. նմանատիպ մասնակցության օրինակ է Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցությունների և նրանց կանանց կազմակերպությունների համագործակցությունը ԵԺԿ-ի կանանց կազմակերպության հետ:

- Գլոբալ/միջազգային մասնակցություն. սա մասնակցության ամենաբարձր մակարդակն է, որի արդյունքում գործողությունները բերում են փոփոխության գլոբալ մակարդակում՝ միևնույն ժամանակ ապահովելով նաև փոփոխություն տեղական և ազգային մակարդակներում: Օրինակ՝ եթե Երկրի օրը Դուք ևս, Հայաստանում, Ձեր համայնքում, Ձեր տանը գտնվելով, միանալով աշխարհի ավելի քան 190 երկրների բնակչությանը, երկրի ռեսուրսների պահպանման համար Ձեր աջակցությունն արտահայտեք երեկոյան մեկ ժամով էլեկտրաէներգիայի բոլոր աղբյուրներն անջատելով, ապա Դուք գլոբալ մասնակցություն եք ունենում: Մեկ այլ օրինակ. եթե նոյեմբերի 19-ին, որը ՄԱԿ-ի կողմից ճանաչվել է որպես Կանանց ձեռներեցության միջազգային օր, Դուք Ձեր համայնքում, մարզում կամ ազգային մակարդակով նախաձեռնում եք միջոցառումների շարք այս շրջանակներում, ապա Դուք ապահովում եք ոչ միայն Ձեր, այլև այս միջոցառումների բոլոր մասնակիցների գլոբալ մասնակցությունը նշված միջազգային շարժմանը:

ՓՈՐՁԵ՛Ք ՄՏԱԲԵՐԵԼ, ԹԵ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՈՐ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԵՔ ԴՈՒՔ ԱՌԱՎԵԼ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԵԼ: ՆՇԵ՛Ք ՆԱԵՎ, ԹԵ ՈՐ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԵՔ ԱՎԵԼԻ ՔԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼԵԼ ՄԻՆՉ ԱՅԺՄ: Ո՞ՐՆ Է ԵՂԵԼ ԴՐԱ ՊԱՏՃԱՌԸ: ԳՆԱՀԱՏԵ՛Ք ՁԵՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅՈՒՄ ԵՎ ՍԱՀՄԱՆԵ՛Ք ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԴ ԲԱՑԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ:

Ինչպես տեսնում եք, մասնակցություն ունենալու և փոփոխություններ արձանագրելու համար պարտադիր չէ լինել Ազգային ժողովի պատգամավոր, նախարար, փոխնախարար կամ զբաղեցնել որևէ պաշտոն: Մասնակցություն կարող են ունենալ և ունեն բոլորը, փոփոխություններ կարող են իրականացնել բոլորը՝ յուրաքանչյուրն իր չափով, իր նախասիրությունների, հետաքրքրությունների, շահերի շրջանակներում, իր կարողությունների սահմաններում: Պարզապես Ձեր խնդիրն է տարբեր ոլորտներում և տարբեր մակարդակներում ցուցաբերած Ձեր մասնակցությունն առավել նպատակային դարձնել, գիտակցել, որ Ձեր յուրաքանչյուր գործողություն շատ կարևոր գործընթացի և իրադարձության սկիզբ կարող է լինել, նաև հասկանալ, որ Ձեր մասնակցությամբ Դուք կարող եք ոգևորել և ոգեշնչել այլ կանանց՝ հետևելու Ձեր օրինակին, աջակցելու Ձեզ՝ ձեր համատեղ խնդիրները միասնական լուծելու գործում, այդ թվում նաև շահերի պաշտպանության գործում. Ձեր մասնակցությունը կարող է ազդել Ազգային ժողովի պատգամավորների կամ Կառավարության ներկայացուցիչների որոշումների և գործողությունների վրա:

Սակայն մի՛ մոռացեք, մենք նաև խրախուսում ենք, որ Դուք Ձեր առջև նպատակ դնեք և հասնեք նրան, որ այդ որոշումներ կայացնողները հենց Դո՛ւք լինեք՝ ընտրվելով խորհրդարանում կամ ստանձնելով պատասխանատվություն գործադիր մարմնում: Այդպիսով, բոլոր ոլորտներում, որտեղ Դուք ապահովում եք մասնակցություն, Դուք Ձեր հերթին կնպաստեք նրան, որ կանանց այն մեծ ներուժը, որի մասին խոսել ենք այս ձեռնարկի սկզբում, առավել արդյունավետ ծառայեցվի մեր երկրի զարգացման գործին: Դա կարող է լինել թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ մշակութային և թե՛ հասարակական ոլորտների միջոցով:

Կանայք, որոնք ցանկանում են մասնակցություն ունենալ քաղաքականության մեջ և որոշումներ կայացնել, պետք է լինեն իրազեկված, կարողանան իրավիճակը ճիշտ գնահատել, վերլուծել, սահմանել լուծումներ և դրանք կյանքի կոչել: Եթե չկան համապատասխան գիտելիքներ կամ աջակցություն այս ամենն իրականացնելու համար, ուրեմն գործընթացը կարող է ձախողվել ցանկացած փուլում:

Այս առումով անհրաժեշտ է տիրապետել գիտելիքների, ունենալ հմտություններ, որոնք նաև հընթացս գործունեության կատարելագործվում են:

Կանայք չեն կարող զարգանալ, եթե շարունակաբար չկրթվեն: Հնարավոր չէ կրթվել՝ չլինելով նախաձեռնող, փնտրող, ձգտող, նպատակասլաց: Հակառակ դեպքում կարելի է միայն սպառել հրամցվող տեղեկատվությունը և քաղաքականությունը, որը հաճախ չի համապատասխանում գոյություն ունեցող իրական կարիքներին: Մասնակցության միջոցով ևս կանայք կարող են ձեռք բերել գիտելիքներ, հմտություններ, ձևավորել համոզմունքներ և սահմանել նպատակներ: Հարկ է նշել նաև, որ մասնակցությունն ու զարգացումն ունեն գալարաձև զարգացման բնույթ. մասնակցությունը բերում է զարգացման, իսկ վերջինս՝ ավելի արդյունավետ մասնակցության, վերջինս էլ՝ կատարելագործված զարգացման (նկար 1):

Նկար 1. Մասնակցության և զարգացման գալար

Առավել հավանական է, որ այն կանայք, որոնց շուրջը հասարակական-քաղաքական իրադրությունների զարգացումն ընթանում է իրենցից անկախ, և նրանք հնարավորություն կամ ցանկություն չունեն մասնակցելու այդ գործընթացներին, ազդելու դրանց վրա կամ սահմանելու իրենց գործողությունները, համալրում են հասարակության ոչ ակտիվ զանգվածի շարքերը: Իսկ այն կանայք, որոնք համարձակորեն արտահայտում են իրենց կարծիքը, օրինակ՝ մասնակցում են հանրային քննարկումների, այլ միջոցառումների, ունեն համոզմունքներ, նրանք առավել մեծ հնարավորություն ունեն գոյություն ունեցող իրավիճակի վրա ազդեցություն ունենալու և այն փոխելու:

2.4.2 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Գաղտնիք չէ, որ մասնակցության բարձր մակարդակը մեծապես նպաստում է ծրագրերի և նախաձեռնությունների արդյունավետության և կայունության ապահովմանը: Երբ կանայք մասնակցություն են ունենում համայնքային կամ պետական մակարդակի ծրագրերի նախագծմանն ու իրականացմանը, նրանք ոչ միայն այդ գործընթացում ներդնում են արժեքավոր գաղափարներ, ժամանակ, հաճախ նաև այլ ռեսուրսներ, այլև իրենք իրենց դիտարկում են որպես այդ գաղափարի կամ նախաձեռնության հեղինակ, որն էլ զարգացնում է «սեփականության» (“ownership”) զգացողություն՝ միևնույն ժամանակ մեծացնելով դրա հանդեպ պատասխանատվության զգացումն ու պատասխանատու վարքագծային մոտեցումը:

2.4.3 ԿԱՆԱՆՑ ՆԵՐՈՒԺՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կանանց ներուժը (կրթություն, գիտելիքներ, հմտություններ, նվիրվածություն, նպատակասլացություն և այլն) արդյունավետ օգտագործելու միջոցով հասարակության զարգացումն առավել իրատեսական է դառնում: Այդ ներուժը կարող է օգտագործվել ոչ միայն հասարակական-քաղաքական ծրագրերի նախագծման և իրականացման, այլև դրանց վերահսկողության և գնահատման գործընթացներում:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2.4.4 ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍՆ Է

Ժողովրդավարության արդի չափանիշները պահանջում են, որ բոլոր մարդիկ, այդ թվում՝ կանայք ևս, հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացման գործընթացներին ակտիվ մասնակցելու հնարավորություն ունենան: Ինչպես նշված է վերևում, կանանց մասնակցության թերացումը այս գործընթացներում նշանակում է մեր երկրի բնակչության մարդկային ռեսուրսների ավելի քան կիսով չափ ոչ արդյունավետ օգտագործում:

Հանրային կյանքի տարբեր ոլորտներում կանանց մասնակցությունը կարելի է դիտարկել որպես ոչ ֆորմալ ուսուցման յուրահատուկ միջոց (սովորել գործելով – learning by doing), որի ընթացքում ձեռք են բերվում գիտելիքներ:

ՔՆՆԱՐԿԵ՛Ք, ԹԵ ՈՐ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ԵՆ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀՀ-ՈՒՄ:

ԿԱԶՄԱԿԵՐՊԵ՛Ք ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՄՏԱԾԵ՛Ք՝ ԻՆՉՊԵՍ ԽԹԱՆԵԼ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ: Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԱՆՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ:

2.5 ԻՆՉԵՍ ԿԱՋՄԵԼ ԾՐԱԳԻՐ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ)

Կանանց մասնակցության խթանումն այսօր անհնար է իրականացնել առանց բազմակողմանի ծրագրման գործընթացի: Մասնակցությունը ապահովող ցանկացած միջոցառում պահանջում է ռազմավարական ծրագրավորում: Այդ ռազմավարական ծրագրավորումն է, որ արդյունքում ապահովում է հաջողություն՝ մեր առջև դրված նպատակներին հասնելու և ծրագրերն իրագործելու համար:

Ստորև սահմանված են այն հիմնական չորս քայլերը, որոնց միջոցով հնարավոր է արձանագրել հաջողությունը հասարակական-քաղաքական մասնակցային գործընթացում:

2.5.1 ԻՆՉՊԵՍ ԸՆԴԱՄԵՆԸ ՉՈՐՍ ՔԱՅԼՈՎ ՀԱՍՆԵԼ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ

Հնարավոր է, որ Դուք դեռևս չունեք որոշումներ կայացնելու իշխանություն, սակայն Ձեր ազդեցությունը կարող եք օգտագործել՝ ճիշտ ուղու վրա հայտնվելու համար: Հավանաբար մանկությունից սկսած՝ Ձեր կյանքի ընթացքում բազմիցս եղել եք ազդեցիկ: Ինչ ռազմավարություններ եք կիրառել Ձեր նպատակին հասնելու, Ձեր ցանկացածը ստանալու համար:

Թո՛ւյլ տվեք Ձեզ օգնել, որ վերհիշեք:

Պատկերացրե՛ք թխվածքաբլիթներով լի տարա: Երեխաներս սիրում են թխվածքաբլիթներ, սիրում են դրանք շարունակ ուտել: Ես տարան որևէ բարձր տեղում եմ դնում, և դա ինձ իշխանություն է տալիս թխվածքաբլիթների տարայի նկատմամբ: Ես կարող եմ որոշել՝ թխվածքաբլիթ տամ, թե՞ ոչ, կամ ո՞ւմ տալ: Եթե իշխանության մեջ ցանկանում եք դիրք զբաղեցնել, պետք է պարզեք, թե ով է թխվածքաբլիթների տարան պահում: Ուստի, եթե Ձեզ կրկին հարց տամ, որպեսզի տեսնեմ, թե ինչ ռազմավարություններ եք օգտագործում, վերհիշե՛ք Ձեր մանկության օրերը: Ինչպե՞ս էիք թխվածքաբլիթը ստանում:

Մարդկանց, այդ թվում նաև շատ քաղաքական գործիչների կողմից հաճախ օգտագործվում են մարդկանց վրա ազդելու 12 տարբեր մեթոդներ՝ նրանց «թխվածքաբլիթ» տալու համար:

Վիմ Այլերինգ՝
«Էդուարդո Ֆրայ» հիմնադրամի (ԷՖՀ) փորձագետ

ՄԵԹՈԴՆԵՐԸ ՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՐԱԳ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏՃԵՆԱՀԱՆԵ՛Ք ՍՏՈՐԵՎ ԲԵՐՎԱԾ ԱՂՅՈՒՍԱԿԸ: ՊԱՏՃԵՆՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՎԵՐՑՐԵ՛Ք ՁԵՋ ՀԵՏ ԵՎ ՆՇԵ՛Ք ՄԵԹՈԴՆԵՐԸ, ԵՐԲ ՁԵՐ ՇՈՒՐՋԸ ԳՏՆՎՈՂ ՄԱՐԴԻԿ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԴՐԱՆՔ. ՁԵՐ ՍԵՓԱԿԱՆ «ԲԻՆԳՈ» ԽԱՂՆ Է:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՐԵՆ ՀԱՄՈԶԵԼԸ

	ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ Եթե ուրիշի համար ինչ-որ բան եք անում, ավելի մեծ է հավանականությունը, որ նա էլ Ձեր խնդրանքը կհարգի:		**ՀՄԱՅՉՈՒԹՅՈՒՆ** Մարդկանց դուր է գալիս հաճոյախոսություն և գնահատանք ստանալը:
	ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Մարդկանց դուր է գալիս հետևողական լինելը. եթե Դուք հավատարիմ եք մնում մի բանի, որը նախկինում է արվել, մեծացնում եք Ձեր խնդրանքը հարգելու հնարավորությունը:		**ՍՊԱՌՆԱԼԸ** Վախի առաջացումն ապահովում է, որ վտանգը փոքրացնելու կամ դրանից խուսափելու համար մարդիկ որևէ բան չանեն կամ գործողություն չձեռնարկեն: Զգույշ եղեք այն օգտագործելիս:
	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՃՆՇՈՒՄ Մարդիկ հակված են գործելու այնպես, ինչպես իրենց հասարակական կամ մասնագիտական միջավայրում ճիշտ է համարվում:		**ԱՆՁՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ** Մարդիկ նախընտրում են «այո» ասել այն հարցերին, որոնք իրենք են կարևոր համարում:
	ՀԱՄԱԿՐՈՒԹՅՈՒՆ Մարդիկ նախընտրում են «այո» ասել նրանց, ում ճանաչում են և/կամ ով իրենց դուր է գալիս:		**ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆ** Ավելի հավանական է, որ մարդիկ գործեն հրատապության զգացողություն ունենալիս:
	ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ Մարդիկ հաճախ հեղինակավոր գործչի կամ մասնագետի ասածն ընդունում են, թեև հեղինակություն համարվող անձի ընկալումը տարբեր անձանց մոտ տարբեր է:		**ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ** Նորմերի կամ օրենքների մատնանշումը, որոնց անհրաժեշտ է, որ մարդիկ հավատարիմ լինեն:
	ՍՂՈՒԹՅՈՒՆ Մարդիկ ավելի են արժևորում այն, ինչն ավելի դժվար է ստանալը:		**ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ** Մասնավորապես՝ փորձագետները հետաքրքրված են իրական բովանդակության վրա հիմնված փաստարկներով:

Բովանդակության աղբյուրը՝ Վիտսկի Փոսթմա, նախագծումը՝ Աննիք Ֆիթի, «Էլ ընդ Դի» բաժին, «ՕՍԻԲի»

Դուք կհամոզվեք, որ առավել հաճախ կիրառվում է փաստարկների համակցություն. **համակրությունը, հմայչությունը** և **անձնական նախապատվությունը** լավ համակցություն են, քանի որ մարդիկ «այո» են ասում նրանց, ովքեր իրենց դուր են գալիս: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է զգուշավոր լինել **սպառնալու** մեթոդը կիրառելիս. երկարաժամկետ հեռանկարում այն կարող է Ձեր դեմ գործել: **Անձնական նախապատվության** մեթոդը կիրառելիս անհրաժեշտ է փորձել ընդհանրություններ գտնել այն անձի հետ, ում վրա փորձում եք ազդել, որպեսզի նախապատվությունը Ձեզ տրվի մեկ ուրիշի համեմատ: Մյուս կողմից՝ Ձեզ, այնուամենայնիվ, անհրաժեշտ կլինի մյուս անձին համոզել, որ Դուք նման հետաքրքրություններ ունեք:

Պարտավորություն մեթոդով կիրառվում են Ձեր՝ հասարակության մաս կազմող նորմերը, արժեքները և օրենքները: Օրինակ՝ կարող է լինել կանանց և տղամարդկանց ավելի մեծ հավասարություն ունենալու նորմ, ըստ այդմ էլ՝ քաղաքական կուսակցությունը կարող է թեկնածուների ցուցակներում ավելի մեծ թվով կանանց ընդգրկելու պարտավորություն զգալ:

Հասարարական ճնշումը կիրառվում է շատերի կողմից կարևորվող խնդիրը առաջ մղելու համար. հասարակական ճնշումը կարող է իշխանություն ունեցողներին ստիպել, որ գործեն խնդրի լուծման ուղղությամբ:

Ես **բովանդակային փաստարկներ** շատ եմ լսում, սակայն դրանք հազվադեպ են ինքնըստինքյան գործողության մեջ դրվում, քանի որ մարդկանց մեծ մասը հույզերով է գործում:

Վերջիվերջո, լավագույնն այն անձի նախընտրություններով պայմանավորված մեթոդն է (կամ մեթոդները), ում վրա փորձում եք ազդել. հետևաբար՝ Ձեզ անհրաժեշտ է նրա

մասին ավելին իմանալ: Նաև չմոռանաք նախապատրաստել, թե ինչպես եք Ձեր փաստարկը ցանկանում ներկայացնել: Իմացե՛ք, որ քիչ ժամանակ ունեք: Վերոնշյալը մտապահելով՝ այժմ կարող ենք անցնել Ձեր նպատակին հասնելու համար անհրաժեշտ՝ Ձեր ազդեցությունը հաստատելու և Ձեզ անհրաժեշտ իշխանությունը ստանալու առաջին քայլին:

Ձեր նպատակը պետք է ճշգրիտ լինի: Սա նման է Google-ի քարտեզներից օգտվելով ինչ-որ տեղ գնալուն. եթե գտնվելու ճիշտ վայրը չգիտեք, այլ գիտեք միայն քաղաքը, ապա Ձեզնից որոշ ժամանակ կպահանջվի անհրաժեշտ վայրը հասնելու համար: Ճանապարհի ընթացքում Ձեր ուղին կարող եք փոխել, եթե իհարկե գիտեք, թե ուր եք գնում:

Ինձ համար նպատակը թեկնածուների ընտրացուցակում բարձր տեղ գրավելն էր, այնպիսի տեղ, որը փաստացի ինձ կտար խորհրդարանում պատգամավորական աթոռ ստանալու լավ հնարավորություն: Կարող եք լայն սահմանված նպատակ ունենալ, սակայն այնուհետև պետք է սահմանեք ավելի փոքր, միջանկյալ նպատակներ: Ձեր նպատակը սահմանելու համար անհրաժեշտ է, որ ինքներդ Ձեզ հարցնեք, թե ինչ եք փորձում ձեռք բերել և երբ: Լավ նպատակը ներկայացվում է սոսկ մեկ ակտիվ նախադասությամբ: Հա՛րց տվեք Ձեզ նաև, թե որ արդյունքը Ձեզ կուրախացներ: Ձեզ անհրաժեշտ է Ձեր առջև ունենալ Ձեր նպատակի պատկերը: Դա օգնում է Ձեր նպատակի մասին այն մարդկանց հետ խոսելիս, ում վստահում եք, նրանց հարցնելու՝ արդյո՞ք հասկանում են, թե ինչ նկատի ունեք: Նրանց խնդրե՛ք լինել քննադատող և Ձեզ օգնել Ձեր նպատակի կարևոր մասերը պարզելու հարցում:

2.5.4 ՔԱՅԼ 2. ՍԱՀՄԱՆԵ՛Ք ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ, ՔԱՆԻ ՈՐ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ ՍՈՍԿ ԵՐԱՋԱՆՔ Է

Եթե ցանկանում եք Ձեր նպատակին հասնել, պետք է պարզեք, թե երբ, որտեղ և ում կողմից են որոշումները կայացվում: Օրինակ՝ քաղաքական կուսակցության թեկնածուների ցուցակում ընդգրկվելու ցանկության դեպքում Ձեզ անհրաժեշտ է պարզել ընտրության գործընթացի տարբեր քայլերը:

Որոշումների երկու տարբեր տեսակ կա. որոշումներ, որոնք պաշտոնապես են կայացվում և գործընթացի մասն են, և որոշումներ, որոնք ոչ պաշտոնապես են կայացվում: Նախ՝ պարզե՛ք պաշտոնապես կայացվող որոշումները, քանի որ իշխանություն ունեցող

մարդիկ հենց այդտեղ են գտնվում: Յուրաքանչյուր որոշում միշտ մարդիկ են կայացնում, իսկ մարդկանց վրա կարելի է ազդել: Մարդիկ հաճախ փաստարկելու հնարավորություն են տալիս: Ուստի վերցրե՛ք մի թուղթ և սկսե՛ք գրի առնել Ձեր նպատակին հասնելու կարևոր պահերը:

Պաշտոնական պահերը կարելի է հեշտությամբ գտնել. պարզապես կարող եք հարցնել, թե որո՞նք են Ձեր նպատակին վերաբերող պաշտոնական որոշումների կայացման ընթացակարգերը, որտե՛ղ են կայացվում որոշումները և ո՛վ կա սենյակում: Ունեք նաև ոչ պաշտոնական որոշումների պահը: Դրանք, ըստ էության, շատ կարևոր են, քանի որ մարդիկ, որոնք անհրաժեշտ է, որ կայացնեն որոշումներ, ցանկանում են խոսել դրանց մասին: Ուստի Դուք կարող եք փորձել նաև այդ մարդկանց հետ ոչ պաշտոնապես կապ հաստատել: Օրինակ՝ նախքան որևէ «ցանցային միջոցառման» գնալը գրի եմ առում այն մարդկանց անունները, ում հետ ուզում եմ խոսել, և այն ամենը, ինչ ուզում եմ ասել նրանց: Համաժողովները, կուսակցական ժողովները, կուսակցական ոչ պաշտոնական առիթները... Բոլորն էլ այն տիրույթն են, որտեղ կայացվում կամ քննարկվում են ոչ պաշտոնական որոշումները: Ըստ էության, էլ ավելի լավ է, եթե այլ մարդիկ են Ձեզ առաջ քաշում կամ Ձեր դրական որակների մասին խոսում:

Երկրորդ քայլի արդյունքն այն է, որ Դուք փաստացի ունենում եք ամսաթվերի, ժամերի և, որ նախընտրելի է, գտնվելու վայրերի գծապատկերը, որտեղ կայացվում կամ քննարկվում են որոշումները:

Պարզե՛ք, թե ով է որոշումներ կայացնում: Չմոռանաք որոշում կայացնողների վրա մեծ ազդեցություն ունեցող մարդկանց: Հիշե՛ք՝ կան մարդիկ, որոնք կարծում են, թե ունեն որոշում կայացնելու իշխանություն, կամ որոնք ասում են, թե ունեն այդ իշխանությունը, սակայն չունեն: Ձեր գործն է պարզել, թե իրականում ով ունի Ձեր նպատակին հասնելու հարցում Ձեզ օգնելու իշխանություն: Կան էլի մարդիկ, որ «թխվածքաբլիթ» են ուզում: Եթե Դուք սխալ անձի եք փորձում համոզել, Ձեր ժամանակն եք վատնում:

Ստորև ներկայացված աղյուսակը շահակիցների քարտեզագրման օգտակար գործիք է: Բազմաթիվ այլ գործիքներ էլ կան, սակայն ինձ սա է դուր գալիս, քանի որ այս աղյուսակում թվարկում եք Ձեզ օգնելու պատրաստակամ մարդկանց:

ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ



2.5.5 ՔԱՅԼ 3. ԻՐԱԿԱՆԱՑՐԵՔ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ (STAKEHOLDER) ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

Վերևի աջ հատվածում նշե՛ք մարդկանց, որոնք «Ձեր կողմից են», այսինքն՝ ցանկանում են ջանք գործադրել Ձեզ օգնելու համար: Մյուս կողմում Ձեր ընդդիմադիրներն են: Այս մարդիկ ջանադրաբար կաշխատեն ապահովել, որ Դուք Ձեր նպատակին չհասնեք: Ապա ներքևի ձախ անկյունում նշեք Ձեր «քննադատների» անունները: Այս մարդիկ Ձեզ չեն օգնի, բայց Ձեր դեմ էլ ակտիվորեն չեն գործի:

Իրականում որոշ մարդիկ ավելի մեծ ազդեցություն ունեն որոշումների կայացման վրա, քան մյուսները: Մարդկանց շուրջը գծեք մեծ կամ փոքր շրջաններ, որքան շրջանը մեծ է, այնքան մեծ է ազդեցությունը:

Երբ բոլորին շրջանի մեջ առնեք, արագ կնկատեք, թե որ քառակուսում են ավելի մեծ թվով շրջանները: Իհարկե, Ձեզ համար ցանկալի է ավելի շատ շրջաններ ունենալ վերևի աջ կողմում:

Տարածված մեծ սխալ է այն, որ մարդիկ փորձում են իրենց ընդդիմադիրներին համոզել: Սակայն ավելի արդյունավետ է և պակաս ջանքեր է պահանջում Ձեր կողմնակիցներին կոալիցիա բերելու փորձը, ուստի կողմնակիցներին ընդգրկելուց հետո Դուք կարող եք պարզել՝ հնարավո՞ր է համոզել Ձեր քննադատներին, որ Ձեզ մոտ գան որպես կողմնակիցներ: Տեսե՛ք՝ կարո՞ղ եք փաստարկներ բերել Ձեր աջակիցների համար, որպեսզի նրանք ավելի ներգրավվեն, և Ձեր քննադատների համար, որպեսզի ավելի աջակցող դառնան: Խնդրում ենք գիտակցել, որ ուրիշ մարդիկ էլ ճիշտ նույն կերպ են վարվելու, բայց՝ իրենց շահերի տեսանկյունից: Ուստի եթե Ձեր քննադատները Ձեր կողմնակիցներ չդառնան, կարող եք փորձել այնպես անել, որ նրանք շարունակեն քննադատությունն ուղղել Ձեր ընդդիմադիրներին, որպեսզի նրանց չմիանան: Այնուամենայնիվ, մեծ ճնշում մի՛ գործադրեք Ձեր քննադատների վրա, քանի որ հակառակ դեպքում նրանք կարող են Ձեր ընդդիմադիրը դառնալ:

Այս քարտեզը կարող է Ձեր ժամանակացույցի յուրաքանչյուր դեպքի համար օգտագործվել, երբ հատուկ որոշում է կայացվում: Ձեր շահակիցների քարտեզը շարունակաբար փոփոխվելու է, ուստի չմոռանաք քարտեզը կանոնավոր կերպով թարմացնել:

Պետք է խոսեք մարդկանց հետ, ինչպես նաև ուշադիր լսեք նրանց, որ պարզեք, թե նրանք Ձեր շահակիցների քարտեզում որտեղ են գտնվում:

Այս քայլի համար Դուք գնում եք հետ՝ դեպի այս բաժնի սկիզբը: Մինչ այս պահը Դուք հաստատ արդեն մտածել եք Ձեզ հասանելի տարբեր մեթոդների մասին և պատկերացում ունեք այն մեթոդների (համակցության) մասին, որոնք լավագույնս կաշխատեն Ձեզ համար: Հիշե՛ք՝ առավել արդյունավետ է այն փաստարկը, որը ստացողն է համարում առավել համոզիչ:



ԱՐՁԱՆԱԳՐԵ՛Ք ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀԻՇԵ՛Ք, ՈՐ ՓՈՐՁԸ ԱՌԱՋԸՆԹԱՑ Է ԱՊԱՀՈՎՈՒՄ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն ներկայացրել ենք, քաղաքական մասնակցությունն ապահովվում է, բայց չի սահմանափակվում միայն քաղաքական կուսակցությունների, դրանց գործունեության, քաղաքական գործընթացներին մասնակցելու միջոցով:

3.1 ԱԶԴԵՑՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Եթե իշխանություն կարելի է ստանձնել հիմնականում քաղաքական կուսակցության աջակցության շնորհիվ (համամասնական ցուցակով մասնակցելով ընտրություններին, կուսակցության կողմից առաջադրվելով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կամ քաղաքական և հայեցողական պաշտոններում) և ունենալ էական կամ ոչ էական ազդեցություն քաղաքական ոլորտում, ապա նույնիսկ առանց քաղաքական իշխանության հնարավոր է ունենալ ազդեցություն՝ բավականաչափ գործունեություն ծավալելով հասարակական ոլորտում: Այդ ազդեցությունը կարող է ակնառու լինել շահերի պաշտպանության, շահառու խմբերի խնդիրների լուծման նպատակով իրականացվող ծրագրերի ու նախաձեռնությունների, քաղաքական ու հասարակական տարբեր նախաձեռնությունների մոնիթորինգի, վերահսկման և այլ գործողությունների միջոցով:

Նպատակի սահմանումը կարևոր քայլերից մեկն է, ինչպես արդեն ներկայացվել է վերևում: Ինչպես յուրաքանչյուր գործողություն սկսելուց առաջ, այնպես էլ մասնակցային գործընթացում ամենակարևոր գործողությունը նպատակի սահմանումն է: Որքան ճշգրիտ սահմանվեն նպատակը և դրան տանող գործողությունները, այնքան ավելի տեսանելի կլինի այն առանցքը, որով պետք է շարժվել՝ նպատակին հասնելու համար:

Մինչ նպատակի սահմանումն անհրաժեշտ է նաև, որ Դուք սահմանեք, թե որ խնդիրներն են Ձեզ ուղղորդում քաղաքական գործընթացներին մասնակցելու: Ինչ կարիքներ եք նկատում, որ առկա են Ձեր հնարավոր շահառուների շրջանում: Ինչ բացթողումներ կան, որ ներկայիս տեղական ինքնակառավարման մարմինների, մարզային կամ հանրապետական իշխանությունների կողմից լուծում չեն գտնում: Արդյոք Դուք պատրաստակամ եք ստանձնելու այդ խնդիրների կամ դրանց որոշակի մասի լուծման պատասխանատվությունը: Եթե այո, եթե Ձեզ համար տեսանելի են առկա խնդիրների լուծման ուղիները, ապա մի՛ խուսափեք սահմանել Ձեր նպատակը և շարժվել առաջ:

Հիշե՛ք, որ մեծ քաղաքականությամբ զբաղվելու համար ավելի դյուրին է այն իրականացնել քաղաքական կուսակցության հետ, նրա հովանու ներքո՝ այդպիսով համագործակցելով կամ անդամակցելով այն քաղաքական ուժին, որի գաղափարներն ու սկզբունքները ընդունելի են Ձեզ համար: Կամ միգուցե նախաձեռնեք ստեղծել նոր թիմ, նոր քաղաքական ուժ կամ նոր կուսակցություն՝ Ձեր թիմակիցների, համախոհների, հետևորդների հետ միասին:

Ձեր ուղերձը՝ Ձեր ուղիղ խոսքը ձեր շահառուների խմբին (ընտրողներ, հետևորդներ և այլք) պետք է լինի հստակ, հասցեական և պարզ:

Ձեր խոսքը, ուղղված հանրությանը, պետք է հիմնված լինի փաստերի վրա և անդրադառնա գոյություն ունեցող խնդիրների ու Ձեր կողմից առաջարկվող լուծումների տարբերակներին: Ձեր խոսքը պետք է հիմնված լինի Ձեր ծրագրի վրա:

3.4 ՁԵՎԱՎՈՐԵՔ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՄԻՋ

Կարևոր է Ձեր անձնական իմիջի ճիշտ ձևավորումը՝ համապատասխան Ձեր կենսագրության, գործունեության, որը Ձեր մասին հստակ պատկերացում կտա Ձեր համախոհներին, և ովքեր կարող են հետևել Ձեզ ոչ միայն Ձեր ուղերձի և սահմանված ծրագրի, այլև Ձեր իմիջի շնորհիվ: Անձնական իմիջի ձևավորման գործում դեր ունեն Ձեր ընտանիքը, շրջապատը, Ձեր նախկին և ներկա գործունեությունը, իրականացրած ծրագրերը, հասարակական կամ բարեգործական նախաձեռնությունները և այլն:

3.5 ՁԵՎԱՎՈՐԵՔ ԹԻՄ

Ուշադրությունն դարձրեք Ձեր թիմի ձևավորման գործընթացին: Թիմը պետք է բաղկացած լինի Ձեր գաղափարներն ընդունող և դրանց նկատմամբ հավատ ունեցող ու նվիրված անձանցից, մասնագետներից, ովքեր պատրաստ են իրենց փորձառությունը ծառայեցնել ձեր համատեղ ծրագրերի իրականացման համար:

Ձախից աջ՝
Քրիստինա Բելման՝ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ (ԿԱՀ),
Լիլիթ Մկրտչյան՝ ԿԱՀ փորձագետ,
Վիմ Այլերինգ՝ «Էդուարդո Ֆրայ» հիմնադրամի (ԷՖՀ) փորձագետ
Էսթեր Քեյզեր՝ «Էդուարդո Ֆրայ» հիմնադրամի (ԷՖՀ) փորձագետ
Աշխեն Բեգլարյան՝ ԿԱՀ փորձագետ,
Լիանա Մարուքյան՝ «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ (ԿԱՀ):

«ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ 90%-Ը ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆ Է, ՈՐ ՄԱՐԴԻԿ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՈՒՆԵՆԱԼ», - ԴԱՅԱՆ ՖԱՅՇՏԱՅՆ, ԱՄԵՐԻԿԱՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ, ԱՄՆ ՍԵՆԱՏՈՐ:

Հարկավոր է որպես համայնք դիտարկել ոչ միայն ֆիզիկական համայնքը՝ գյուղ, քաղաք, մարզ կամ ողջ երկիրը, այլև առանձին սոցիալական խմբերը, որոնց անդամներն ունեն նույն խնդիրները: Օրինակ՝ փախստականներ, հաշմանդամություն ունեցող անձինք, զինծառայողներ, պատերազմի մասնակիցների ընտանիքների անդամներ, երիտասարդ մայրեր, կանայք և այլք:

Հաճախակի հանդիպումներ կազմակերպե՛ք Ձեր համայնքի հետ հասարակական կամ քաղաքական նախաձեռնություններ իրագործելու ընթացքում: Հաշվի՛ առեք համայնքի կարիքները, ուշադրությո՛ւն դարձրեք դրանց լուծման ընթացքին՝ որքան արագ են լուծվում խնդիրները, ինչպիսի նոր խնդիրներ են առաջ գալիս: Պատրաստ եղեք արձագանքելու հրատապ խնդիրներին:

Մշտապես ապահովե՛ք հետադարձ կապ Ձեր համախոհների, շահառուների, ընտրողների, շահակիցների հետ:

Երբ սահմանված կլինի Ձեր գործողությունների ամբողջական ծրագիրը, համաձայն վերը նշված կետերի՝ միևնույն ժամանակ կգնահատեք Ձեր բոլոր հնարավորությունները, առավելություններն ու թերությունները, ուժեղ և թույլ կողմերը, հնարավոր ռեսուրսները, կկազմեք նաև Ձեր մրցակիցների համապատասխան մրցակցային վերլուծությունները, ապա հաջորդ քայլը կլինի այն, որ սահմանեք Ձեր կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական ու մարտավարական ծրագրերը և համատեղ ջանքերով դրանք իրականացնեք Ձեր թիմակիցների ու համախոհների հետ:

ԱՐԴԵՆ ՁԵՐ ԳՈՐԾԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է

Մենք մաղթում ենք Ձեզ հաջողություն Հայաստանի Հանրապետության հասարակական և քաղաքական ոլորտներում Ձեր հետագա գործունեության մեջ:

Մաղթում ենք, որ Ձեր գործունեության միջոցով հանրության առջև ծառացած բազմաթիվ խնդիրներն ավելի դյուրին լուծվեն, իսկ Դուք ոգևորող օրինակ հանդիսանաք ուրիշ կանանց համար՝ իրենց հասարակական-քաղաքական գործունեությունը մեկնարկելու ճանապարհին:

«Եվրոպայի բնակչության կեսից ավելին կանայք են: Նրանք կենսական դեր են կատարում մեր ամենօրյա կյանքում: Նրանք նպաստում են քաղաքականությանը՝ իրենց առանձնահատուկ կենսափորձը քաղաքական ասպարեզ բերելով: Հետևաբար, կանայք կարող են փոխել քաղաքականությունը: Կանանց ներկայացվածությամբ և ազդեցությամբ քաղաքականությունը ժողովրդավարական ներկայացուցչության լիարժեքության է հասնում»:

Տիկին Դորիս ՓԱԿ,
պատվավոր դոկտոր,
ԵԺԿ կանանց
կազմակերպության
նախագահ

Եվրոպական միության 2019թ. եվրոպական ընտրությունները

2019թ.-ից Եվրախորհրդարանում կանայք 39,5% են կազմում: 1979թ. հիմնադրումից ի վեր, սա ամենաբարձր տոկոսային ցուցանիշն է, որին Եվրախորհրդարանը հասել է: Եվրախորհրդարանում Եվրոպական Ժողովրդական կուսակցության խմբին 33,2% է բաժին է ընկնում, ինչը ցածր է միջինից, ինչպես նաև մյուս խմբերի (կոկուսներ) մեծամասնությանը բաժին ընկնող մասից:

2019թ. եվրոպական ընտրությունների համար տասնմեկ անդամ պետություններ ունեին ընտրացուցակների կազմին վերաբերող իրավաբանորեն պարտավորեցնող գենդերային քվոտաներ.

Ա. Որոշ անդամ պետություններում գենդերային քվոտաները սեռերի առումով չեզոք են՝ նպատակ ունենալով խուսափել թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց թերներկայացվածությունից: Դրանց թվում են Սլովենիան և Իսպանիան, որոնք պահանջում էին գենդերային հավասարակշռված ներկայացվածությամբ ընտրացուցակներ, ընդ որում, որ սեռերից յուրաքանչյուրը ներկայացված լիներ առնվազն ցուցակի թեկնածուների 40%-ով: Պորտուգալիայում գենդերային հավասարակշռված ցուցակներով անհրաժեշտ էր յուրաքանչյուր սեռի առնվազն 33%-անոց (1/3) ներկայացվածություն: Եվրոպական ընտրությունների համար Լեհաստանի գենդերային քվոտան առաջին անգամ կիրառվել է 2014թ. ընտրությունների ժամանակ, ընդ որում՝ յուրաքանչյուր սեռի առնվազն 35% թեկնածուներով:

Բ. Երեք անդամ պետություններ՝ Բելգիան, Ֆրանսիան, Լյուքսեմբուրգը, ցուցակներում պարիտետ (հավասարություն) են պահանջել (50%/50%): Օրինակ՝ Լյուքսեմբուրգը 50% է պահանջել ցուցակի սեռերից յուրաքանչյուրի համար, ընդ որում՝ պահանջը չկատարող կուսակցությունների նկատմամբ ֆինանսական պատժամիջոցներ նախատեսելով:

Գ. Ռումինիայի ընտրական կանոններով սահմանվում է, որ հնարավոր չեն ամբողջությամբ կանանցից կամ ամբողջությամբ տղամարդկանցից կազմված ցուցակներ:

Ընտրացուցակներում երկու սեռերի թեկնածուների տեղը խորհրդարանում աթոռ զբաղեցնելու մեծ հնարավորությամբ դիրքեր ապահովելու նպատակով՝ որոշ անդամ պետություններ պահանջել են ցուցակում տղամարդանց և կանանց ներկայացնել շախմատաձև հերթականությամբ (անգլ.՝ “zipping”): Այդպիսին է Բելգիայի, Ֆրանսիայի, Պորտուգալիայի, Սլովենիայի և Իսպանիայի օրինակը:

Քաղաքական կուսակցությունների ներկայացրած՝ սեռերի մասին դրույթի պահանջները չբավարարող ընտրացուցակները մերժվել են՝ անվավեր ճանաչվելով (օր.՝ Ռումինիա, Սլովենիա և Իսպանիա), իսկ այլ երկրներում այդ ընտրացուցակներն ընդունվել են ընտրությունների համար, սակայն դրանք ներկայացնող կուսակցությունը պատժվել է՝ տույժով և/կամ ընտրարշավի սուբսիդիաների կրճատմամբ (օրինակ՝ Պորտուգալիայում):

Այն անդամ պետություններում, որտեղ իրավաբանորեն պարտավորեցնող ընտրական գենդերային քվոտան բացակայում է, քաղաքական կուսակցությունները երբեմն հոժարակամ սահմանում են թեկնածուների առաջադրման քվոտաներ. ասվածը, ի թիվս այլ երկրների, վերաբերում է Նիդերլանդներին, Դանիային և Շվեդիային:

Հետազոտությունները ցույց են տվել, որ համաձայնություն կա այն մասին, որ կին թեկնածուների համար համամասնական ներկայացուցչության համակարգերը մեծամասնական համակարգերի համեմատ ավելի նպաստավոր են:

Ազգային խորհրդարաններ. Նիդերլանդներ և Գերմանիա

Ընդհանուր առմամբ, ԵՄ անդամ պետությունների ազգային խորհրդարաններում կանայք 2020թ. կազմել են 28,6%, ինչը ևս գտնվում է երբևէ գրանցված ամենաբարձր մակարդակի վրա, սակայն երբևէ չի հավասարվել Եվրախորհրդարանում կանանց ներկայացվածության մակարդակին: Ազգային խորհրդարաններում կանանց տոկոսը 2000-ականների կեսին նկատելիորեն աճեց, ինչը կարող էր այն ժամանակահատվածում մի քանի անդամ պետություններում սեռերի համար ընտրական քվոտաների սահմանման հետևանքը լինել (Բելգիա, Ֆրանսիա, Պորտուգալիա, Իսպանիա):

Նիդերլանդներում և Գերմանիայում այս աճը սկսել էր դեռևս 1990-ականներին, ընդ որում՝ Հոլանդիայի ստորին պալատում ընտրված կանանց տոկոսն աճեց՝ 32-ից (1994թ.) հասնելով 42,7-ի (2010թ.): Համադրելի են Գերմանիայի Բունդեսթագի ցուցանիշների հետ՝ 26%-ից (1994թ.) աճը կազմել է 36% (2013թ.): Սակայն 2012-2013թթ.-ից ի վեր ցուցանիշները երկու երկրում էլ կայունացման միտում են դրսևորել, իսկ վերջերս՝ անգամ նվազել: 2020թ. Հոլանդիայի խորհրդարանում կանանց բաժին է ընկնում 33,3%-ը, իսկ Գերմանիայի խորհրդարանում՝ 31,2%-ը[1]: Երկու երկրում էլ կան թեկնածուների առաջադրման հոժարակամ քվոտաներ ունեցող մի քանի քաղաքական կուսակցություններ, սակայն նման ներքին կանոններ ոչ բոլոր կուսակցություններն են իրականացրել:

1 Հմմտ. Հայաստանի խորհրդարանում կանայք 23,5% են կազմում (ըստ 12.2018-ի):
Figures IPU, https://data.ipu.org/women-ranking?month=1&year=2020

Վերոնշյալ ցուցանիշները և ըստ երկրների՝ խնդրով զբաղվելու տարբեր ուղիները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր երկիր սեփական ընտրությունն է կատարում իրավաբանորեն պարտավորեցնող քվոտաներ ընդունելու կամ չընդունելու առումով: Վերջին դեպքում քաղաքական կուսակցությունները կարող են հոժարակամ որոշել թեկնածուների ցուցակների, ինչպես նաև կուսակցության խորհուրդներում՝ ազգային, ինչպես նաև տեղական մակարդակով, նշանակումների համար քվոտաների վերաբերյալ ներքին կանոնները: Ստորև կարող եք ծանոթանալ Եվրոպայի մակարդակով և Գերմանիայում ու Նիդերլանդներում կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ օրենսդրության ամփոփ նկարագրին:

Եվրոպայի խորհուրդ (ԵԽ)

2001 հունվարից Հայաստանը Եվրոպայի խորհրդի՝ եվրոպական աշխարհամասի մարդու իրավունքների առաջատար կազմակերպության անդամ է: Իր անդամ պետություններին կոռուպցիայի դեմ պայքարի և դատական անհրաժեշտ բարեփոխումների իրականացման հարցում օգնելուց զատ, նա խթանում է նաև մարդու և մասնավորապես կանանց իրավունքները՝ միջազգային կոնվենցիաների միջոցով: ԵԽ համաձայն՝ կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցությունը քաղաքական և հանրային որոշումների կայացմանը արդարության և ժողովրդավարության պայման է: 2003թ. ԵԽ-ի «Անդամ պետություններին քաղաքական և հանրային որոշումների կայացմանը կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության վերաբերյալ հանձնարարականով»[2] չափանիշներ են ներկայացվել՝ հստակ ուղղություն ցույց տալու, թե ինչպես հասնել նպատակին:

2 «Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված 2003թ. մարտի 12-ի՝ քաղաքական և հանրային որոշումների կայացմանը կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին «Rec (2003)3» հանձնարարական և պարզաբանող հուշագիր».
*https://search.coe.int/cm/Pages/result_details.*aspx?ObjectID=09000016805e0848*

Ըստ ԵԽ հանձնարարականների՝ ընդունվում է, որ կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցությունը նշանակում է, որ քաղաքական կամ հանրային կյանքում որոշումների կայացման ցանկացած մարմնում կանանց կամ տղամարդկանց ներկայացվածությունը 40%-ից չպետք է իջնի: ԵԽ մի քանի անդամ պետություններ, օրինակ՝ Իսպանիան և Սլովենիան, այս հանձնարարականն իրականացրել են իրավաբանորեն պարտավորեցնող, գենդերային առումով չեզոք քվոտայի համակարգերում՝ 2003թ. սկսած՝ պահանջելով գենդերային հավասարակշռվածությամբ ընտրացուցակներ, ընդ որում՝ յուրաքանչյուր սեռ ներկայացված է թեկնածուների ցուցակի առնվազն 40%-ով:

Եվրամիություն

ԵՄ սահմանադրությունը համարվող «Եվրոպական միության մասին» պայմանագիրը («Լիսաբոնի պայմանագիր») կանանց և քաղաքականության վերաբերյալ կարևոր փաստաթուղթ է: Նախաբանի 2-րդ հոդվածում նշվում է. «Միությունը հիմնված է մարդու արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքները, այդ թվում՝ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները հարգելու արժեքների վրա: Այդ արժեքները համընդհանուր են անդամ պետություններում՝ հասարակությունում, որտեղ գերակշռում են բազմակարծությունը, խտրականության բացակայությունը, հանդուրժողականությունը, արդարությունը, համերաշխությունը և կանանց ու տղամարդկանց միջև հավասարությունը»: Սույն հոդվածից հետևում է, որ ԵՄ-ն ակտիվորեն հետամուտ է որոշումների կայացմանը՝ կանանց մասնակցությունը խթանելու նպատակին: Բացի դրանից, 2016-2019թթ. գենդերային հավասարության ուղղությամբ Եվրահանձնաժողովի (ԵՀ) ռազմավարական ներգրավվածության շրջանակում այն առաջնահերթ նպատակների թվում էր, որոնցից էր «մեղմ օրենսդրական» միջոցառումների սահմանումը, այդ թվում՝ տվյալների

հավաքումն ու ֆինանսավորումը, անդամ պետություններին և քաղաքացիական հասարակությանն օժանդակելու համար: Ինչ վերաբերում է 2019թ. եվրոպական ընտրություններին, ԵՀ-ն անդամ պետություններին և քաղաքական կուսակցություններին հորդորեց սատարել գենդերային հավասարակշռված ընտրացուցակներին:

Գերմանիա

1994թ. Գերմանիայի օրենսդիր մարմինը սահմանադրության 3-րդ (2) հոդվածը լրացրեց երկրորդ նախադասությամբ: Ձևակերպումը հետևյալն է. «Տղամարդիկ և կանայք հավասար են: Պետությունը խթանում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների արդյունավետ իրացումը և աշխատում է առկա թերությունների վերացման ուղղությամբ»: Թեև այդպիսով հավասարությունը հռչակվեց որպես պետության խնդիր, Գերմանիան այս դրույթն իր ընտրական օրենքի միջոցով դեռևս չի իրականացրել: Միաժամանակ, մի քանի քաղաքական կուսակցություններ թեկնածուների իրենց ցուցակներում հոժարակամ գենդերային քվոտաներ են կիրառել: Սակայն 2013թ.-ից սկսած՝ կանանց ներկայացվածության բացասական արձագանքի հետևանքով գերմանացի կանանց (և տղամարդկանց) մեջ մտահոգություններն ավելացել են: Գերմանիան ընտրական բավականին բարդ օրենք ունի, որը կանանց ներկայացվածությունը սահմանափակող է համարում: Բացի դրանից, հետազոտությունները ցույց են տվել, որ կուսակցությունների հոժարակամ քվոտաները բավարար չեն Գերմանիայի խորհրդարաններում գենդերային պարիտետի հասնելու համար: Ուստի վերջերս ազգային քննարկում է մեկնարկել այն հարցի շուրջ թե այժմ պետության գործելու անհրաժեշտություն կա՞, թե՞ ոչ: Գործողության տարբերակներից մեկը պարիտետային օրենքն է: Մյուս տարբերակը կարող է ընտրական օրենքի բարեփոխումը լինել, այդ թվում՝ կանանց համարժեք ներկայացվածության պարտադիր կարգավորումները[3]:

3 Weichmann, E., Politische Repräsentanz von Frauen, Analysen & Argumente Nr. 416/November 2020 (Konrad Adenauer Stiftung, Berlin 2020).

Նիդերլանդներ

Նիդերլանդների 2008թ. սահմանադրությամբ հստակ սահմանվում են կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները: 1-ին հոդվածը հետևյալ ձևով է շարադրված. «Նիդերլանդներում բոլոր անձանց նկատմամբ հավասար պայմաններում վերաբերմունքը հավասար է: Կրոնի, հավատի, քաղաքական կարծիքի, ռասայի կամ սեռի, կամ որևէ այլ հիմքով խտրականություն չի թույլատրվում: Սահմանադրության հիման վրա «Հավասար վերաբերմունքի մասին ընդհանուր օրենքը» արգելում է խտրականությունը՝ տարածվելով օբյեկտիվորեն արդարացված խտրականության վրա: Օրենքը հակախտրական դրույթներ է պարունակում աշխատանքային պայմանների, նշանակումների, աշխատանքից ազատման և կրթության ոլորտներում: «Հավասար վերաբերմունքի» հանձնաժողովը ստեղծվում է նշված օրենքը կիրարկելու և իրականացումը մշտադիտարկելու համար: Սակայն ընտրական օրենքում գենդերային այս հավասարությունը չի ներառվել: Թեկնածուների ցուցակներում, ինչպես նաև իրենց կուսակցության ներքին կառուցվածքում կանանց ներկայացվածության գործնական ապահովումը քաղաքական կուսակցությունների պատասխանատվությունն է համարվում: Բոլոր հիմնական քաղաքական կուսակցությունները հանդես են եկել կանանց համամասնական ներկայացվածության օգտին, իսկ մի քանի քաղաքական կուսակցություն թեկնածուների ցուցակների համար հոժարակամ քվոտաներ են սահմանել: Սակայն մյուսներն այդպես չեն վարվել:

Եզրակացություն

Խորհրդարաններում կանանց քաղաքական ներկայացվածության մակարդակից և վերոնշյալ հանձարարականի ու օրենքների ընդհանուր նկարագրից բխում է հստակ եզրակացություն. ընտրական քվոտայի լավ նախագծված օրենքներն անհրաժեշտ են քաղաքականության մեջ կանանց ներկայացվածությունը մեծացնելու համար: Ավելին, հետազոտությունները ցույց են տալիս, որ դրանք կանանց զգալիորեն ներառելու հարցում քաղաքական կուսակցություններին խրախուսելու ամենաարդյունավետ ուղին են:

Քաղաքականապես ակտիվ դառնալու ուղիները մի քանիսն են: Կարելի է դա անել առանց քաղաքական կուսակցության անդամակցելու կամ անդամակցելով քաղաքական կուսակցության: Վերջինս ավելի արդյունավետ է, քանի որ քաղաքական համայնապատկերում գերիշխում և այն ձևավորում են քաղաքական կուսակցությունները: Կուսակցությանն անդամակցելով՝ Դուք ընդունում եք գործող կառուցվածքները և դրանց նպաստելու նպատակ դնում: Եթե Դուք նախընտրում եք գործող քաղաքական կառուցվածքը վիճարկել, ավելի լավ տարբերակ կլինի որևէ կուսակցության չանդամակցելը և քաղաքական մասնակցության այլ միջոցների օգտագործումը:

Առանց կուսակցության անդամակցելու քաղաքական մասնակցություն

Ա. Համակարգի վիճարկումը. եթե գործող քաղաքական կարգը վիճարկելու նպատակ ունեք, Ձեզ կարող են բավականին հեղափոխական մեթոդներ անհրաժեշտ լինել՝ սկսած բողոքի շարժմանը միանալուց, փողոց դուրս գալուց, խաղաղ կամ անգամ բռնի ցույցերի մասնակցելուց, սոցիալական ցանցերի միջոցառումներից, դատական գործեր սկսելուց և ՁԼՄ-ներում հրապարակայնություն ապահովելուց: Այս ձևով կանանց քաղաքական մասնակցության ամենավառ օրինակը ներկայումս տեղի է ունենում Բելառուսում: Համացանցում կարող եք գտնել այդ երկրում կիրառվող բոլոր հնարավոր օրինակները:

Բ. Առկա քաղաքական համայնապատկերում քաղաքական մասնակցությունը. երկրների մեծ մասում կանանց քաղաքական գործունեություն իրականացնելու պատճառը որոշումների կայացման վրա ազդելն է, ոչ թե կուսակցության անդամակցությանը նախապատվություն տալը:

Դրա իրականացման ուղիները

• Շփման ցանցի և կապերի ստեղծում (անգլ.՝ Networking). համախոհ կանանց (փոքր) խմբի ստեղծում: Սա կարելի է անել ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակով: Ուսումնասիրեք խնդիրը, որի վրա ցանկանում եք ազդել, գտեք շահակիցների, կապեր ստեղծեք քաղաքական գործիչների շրջանում և լրատվամիջոցների ուշադրությունը հրավիրեք խնդրի վրա: Օրինակ՝ «Ռումինիայի հունգարացիների ժողովրդավարական դաշինքի» (անգլ.՝ RMDSz) տեղական մասնաճյուղերի կանայք այսպես սկսեցին: Կանանց մտահոգում էր իրենց գյուղի փողոցներում աղբի մեծ քանակը, և նրանք սկսեցին աղբի մաքրման արշավ: Միաժամանակ նրանք հաջողությամբ ճնշում գործադրեցին տեղական քաղաքական իշխանությունների վրա՝ իրենց պատասխանատվությունը ընդունելու և հարկ վճարողների գումարներն աղբի վերամշակման համակարգի ստեղծմանն ուղղելու համար: Կանանց համար պարզ դարձավ, որ իրենց ազդեցությունն ավելի մեծ կլիներ տեղական հասարակական խնդիրներով զբաղվող քաղաքական կուսակցության, այն է՝ ԵԺԿ անդամ RMDSz կուսակցությանն անդամակցելու դեպքում: Նրանց հաջորդ քայլը տեղացի կանանց կազմակերպության մեկնարկն էր և կանանց RMDSz ազգային կազմակերպության ստեղծման համար աջակցություն գտնելը:

• Օրակարգի սահմանում. վերոնշյալ օրինակը ցույց է տալիս նաև, որ կանայք կարող են խնդիրները քաղաքական օրակարգ բերել շփումների ցանցի համակարգման և ճնշում գործադրելու միջոցով: Սակայն շատ շուտ մի՛ հիասթափվեք. Ձեզնից կարող են տարիներ պահանջվել Ձեր նպատակին հասնելու համար:

• Խնդրագրեր, ցույցեր, ֆլեշմոբ արշավներ. կանանց առնչվող քաղաքական խնդիրներին վերաբերող անօրինականության անհետաձգելի դեպքի ժամանակ Ձեզ անհապաղ գործողություն կարող է անհրաժեշտ լինել: Օրինակ՝ անցյալ տարի լեհ կանայք իրենց կառավարության վրա ճնշում գործադրելու համար այս մեթոդները կիրառեցին, որպեսզի կառավարությունը հղիության արհեստական դադարեցման ավելի խիստ օրենսդրություն չընդունի: Նույնն արեցին Ուկրաինայում տեղացի կանայք, երբ պարզեցին, որ իրենց գյուղի դպրոցների .տնօրենները յուրացրել են դպրոցական սննդի գնման համար նախատեսված գումարները:

• Մեկ խնդրի վերաբերող շարժման կամ հասարակական կազմակերպության (ՀԿ) անդամակցությունը. քաղաքականապես արդյունավետ լինելու համար կարող է օգտակար լինել արդեն գործող լոբբիստական կազմակերպության կամ կանանց կազմակերպության անդամակցելը: Դրանցից շատերը ևս միջազգային մասնաճյուղեր ունեն: Օրինակները բազմաթիվ են, ինչպես՝ «Հանուն խաղաղության և ազատության կանանց միջազգային լիգան» (անգլ.՝ WILPF, www.wilpf.org), «Կանանց իրավունքների կենտրոնը» (անգլ.՝ WRC, www.wrcorg.am), որի նպատակը օրենսդրական նախաձեռնությունների միջոցով Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքարն է, «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան (ՀԵԿԱ, www.aywa.am), որն աջակցում է կանանց կրթության ու զբաղվածության հարցում և խթանում կանանց առաջնորդությունն ու տնտեսական մասնակցությունը, և այլն:

• Արհմիությանը կամ այլ կազմակերպության անդամակցումը, որը Հայաստանում հզոր ոչ պաշտոնական լծակ է քաղաքական իշխանության վերահսկողության համար:

Քաղաքական կուսակցության անդամակցությամբ քաղաքական մասնակցությունը

Երկրների մեծ մասում քաղաքական կուսակցությունները կանանց քաղաքական ներգրավման և ընտրվելու առաջնային և ամենաարդյունավետ կառույցներն են: Հետևաբար անհրաժեշտ է, որ դառնաք քաղաքական կուսակցության անդամ: Կուսակցության անդամակցության Ձեր ընկալումը կախված է Հայաստանի քաղաքական մշակույթից: ԵՄ երկրների մեծ մասում կանայք անդամակցում են որևէ կուսակցության, քանի որ ցանկանում են նպաստ ունենալ և իրենց խոսքն ասել այն նպատակների վերաբերյալ, որոնց վրա քաղաքականությունը պետք է կենտրոնանա՝ բոլոր քաղաքացիների բարօրության մասին հոգալը, բոլորի համար արդարությունը՝ օրենքի գերակայության երաշխավորմամբ, Ձեր երկրի ռազմական անվտանգության համար պատասխանատվության ստանձնումը, տնտեսական աճի խթանումը և անկախությունը և այլն:

Ա. Անդամակցելը. անկախ Ձեր՝ կուսակցության անդամակցության բացասական կամ դրական ընկալումից, ազդեցություն ունենալու սոսկ մեկ տարբերակ կա՝ անդամ դառնալը: Որպես անդամ Դուք պետք է կուսակցության ներսում գտնեք Ձեր ուղին, ինչը հիմնականում կախված է Ձեր հետաքրքրություններից և հմտություններից: Ո՞ր հարցերն եք կարևորում կամ համարում, որ համապատասխանում են անձամբ Ձեզ, Ձեր համայնքին կամ Ձեր պետությանը: Ձեր կարծիքով՝ ո՞ր հմտություններով Դուք կարող եք նպաստ բերել՝ գրելը, հռետորությունը, լրատվամիջոցների հետ աշխատանքի հմտությունները, արշավներ իրականացնելը, ղեկավարումը: Վերջին, սակայն ոչ պակաս կարևոր հարցն է՝ որո՞նք են Ձեր նպատակները: Դուք թեկնածու դառնալու կամ Ձեր կուսակցությունում կանանց խնդիրների համար լոբբիստական ակտիվիստ դառնալու նպատակ ունե՞ք: Կամ՝ տեղական կամ ազգային մակարդակով կուսակցության կառավարման խորհրդում պաշտոն զբաղեցնելու նպատակ ունե՞ք:

Բ. Փաստեր հավաքելը. անդամ դառնալուց հետո Ձեզ անհրաժեշտ է ճանաչել կուսակցությունը՝ շուրջը նայել, կապեր ստեղծել, ժողովների մասնակցել, ուսումնասիրել կանոնադրությունը, վերլուծել կուսակցության քաղաքական գործիչների գործունեությունը, խոսել մյուս անդամների հետ և այլն:

Գ. Նպատակներ և հավակնություններ. Ձեզ անհրաժեշտ է նաև անձամբ պարզել, թե որոնք ենք կուսակցության ներսում Ձեր նպատակները և հավակնությունները: Սրա պատճառը կարող է պարզ լինել, ինչպես օրինակ՝ կուսակցության, դրա գործունեության կամ ծրագրի հետ ծանոթանալու ցանկությունը: Մյուս պատճառներից կարող է լինել այն, որ Դուք ցանկանում եք, որ գենդերային առումով կուսակցությունն ավելի զգայուն լինի, կամ թեկնածու եք ուզում լինել և այլն: Տարբերակները շատ են:

Դ. Մտային քարտեզավորում. Ձեր ընտրած որևէ կուսակցությանը Ձեր անդամակցության նպատակը բացահայտելու վարժություն կարող է լինել մտային քարտեզի ստեղծումը, որը Ձեզ կօգնի մտածել և գաղափարներ ստեղծել[4]:

Ընդհանուր առմամբ ակնհայտ է, որ քաղաքական կուսակցությունում կանանց կազմակերպությունների առկայությունը կարող է հանդիսանալ հզոր խթան կուսակցությանը կանանց անդամակցելու համար: Սա կուսակցությունում ճանաչում ձեռք բերելու, սովորելու, զորեղանալու և իրենց նպատակների ու հավակնությունների համար աջակցություն ստանալու հնարավորություն տվող վայրն է:

4 Մտային քարտեզն ուղեղի համար նախատեսված գործիք է, որն արտացոլում է Ձեր գլխում ընթացող մտածելու գործընթացը: Մտային քարտեզավորումն օգնում է մտածել, գիտելիք կուտակել, մտաբերել և գաղափարներ հղանալ:

ԵԺԿ կանանց կազմակերպություն

www.eppwomen.eu

«ԵԺԿ կանանց կազմակերպությունը» (Եվրոպայի ժողովրդական կուսակցություն) ԵԺԿ-ի պաշտոնական ասոցիացիան է, որը նպատակաուղղված է Եվրամիությունում կանանց առաջխաղացմանը: Ասոցիացիայի կազմում եվրոպական կուսակցությունների համախոհ անդամներն են, առաջնորդը՝ նախագահը, Եվրախորհրդարանի նախկին պատգամավոր, պատվավոր դոկտոր տիկին Դորիս Փակը:

ԵԺԿ կանանց կազմակերպությունը հիմնադրվել է 1981թ. և կազմված է ԵԺԿ քաղաքական կուսակցությունների անդամ 60-ից ավելի կազմակերպություններից, որոնք Եվրամիությունում և ԵՄ անդամ չհանդիսացող երկրներում ԵԺԿ անդամ են: Բոլոր անդամ կազմակերպությունները քաղաքական կուսակցությունների կանանց կազմակերպություններ են: Հայաստանի երկու կուսակցություններ՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը և «Ժառանգություն» կուսակցությունը, ԵԺԿ դիտորդի կարգավիճակ ունեցող անդամներ են:

ԵԺԿ կանանց կազմակերպությունը (ԵԺԿԿ) իրավաբանորեն գրանցված է ԵԺԿ կազմում, ինչպես երաշխավորված է ԵԺԿ կանոնադրությամբ: Այն ԵԺԿԿ-ին տալիս է ԵԺԿ քաղաքական ասամբլեայի բոլոր նիստերին կարծիք հայտնելու և ԵԺԿ սուբվենցիաներ ստանալու իրավունք: ԵԺԿԿ-ն նաև սեփական կանոնադրությամբ իր իրավական դիրքն է սահմանել որպես իրավաբանորեն ճանաչված ասոցիացիա[5]: Կանոնադրությամբ երաշխավորվում է ԵԺԿԿ-ի կազմակերպական կառուցվածքը: Այն կազմված է գործադիր խորհրդից, ընդհանուր խորհրդից և կոնգրեսից՝ սահմանված գործառույթներով, խնդիրներով և կանոնավոր նիստեր գումարելու պարտավորությամբ:

ԵԺԿԿ-ն ունի հստակ նշանաբան: Կանայք Եվրոպայի բնակչության կեսից ավելին են կազմում: Նրանք կյանքում կենսական դեր են կատարում և իրենց հատուկ կենսափորձով նպաստում են քաղաքականությանը: Կանանց ներգրավման շնորհիվ քաղաքականությունը հասնում է ժողովրդավարական ներկայացուցչության լիարժեքության:

5 ԵԺԿԿ կանոնադրությունը կարող եք գտնել այստեղ՝ http://www.eppwomen.eu/documents/statutes/

Կյանքի կոչելով այս նշանաբանը՝ ԵԺԿԿ-ն նպատակաուղղված է ողջ Եվրոպայում կանանց քաղաքական ազատագրության (էմանսիպացիայի) առաջմղմանը: Այն խթանում է կանանց հետ առնչվող այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են՝ աշխատաշուկայում գենդերային հավասարությունը և կանանց ձեռնարկատիրությունը: Մենք շեշտադրում ենք նաև կանանց դերը հանուն ազատության, արդարության, կանանց իրավունքների և ժողովրդավարության մղվող պայքարում: ԵԺԿԿ-ն կանանց և գենդերային հարցերին է նվիրվում ոչ միայն Եվրոպայում, այլև հսկայական փոփոխությունների բովով անցնող այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք են Մերձավոր Արևելքն ու Հյուսիսային Աֆրիկան:

ԵԺԿԿ-ն այս նպատակներին փորձում է հասնել մի քանի ուղիներով, որոնք համառոտ ուրվագծվում են ստորև.

- շփման ցանցերի ստեղծում անդամ ազգային կազմակերպությունների պատվիրակների հետ կանոնավոր հանդիպումների միջոցով.
- օրակարգի սահմանում. կանանց խնդիրների ներառում ԵԺԿ օրակարգում՝ դրանց անդրադարձ կատարելով ԵԺԿ կոնգրեսի փաստաթղթերում և բանաձևերում, ինչպես նաև Քաղաքական ասամբլեայի և ԵԺԿ աշխատանքային խմբերի նիստերում.
- կանանց խնդիրների ուսումնասիրություն. ամեն տարի ԵԺԿԿ-ն կազմակերպում է ամառային ակադեմիա, որտեղ գիտափորձագետների և բարձր հեղինակություն վայելող քաղաքական գործիչների հետ քննարկվում են մերօրյա հետաքրքրություն ներկայացնող, կանանց վերաբերող խնդիրներ.
- բանաձևերի նախագծերի կազմում և օրակարգում ներառում. ԵԺԿԿ-ն շարադրում է կանանց առնչվող որոշ թեմաների վերաբերյալ բանաձևերը, որոնց վրա է հրավիրվում ԵԺԿ, եվրոպական խորհրդարաններում ԵԺԿ խմբի և մեր անդամ կազմակերպությունների ուշադրությունը՝ դիմելով նրանց իրենց երկրների ազգային քաղաքական օրակարգերում դրանք ներառելու հարցով.

- քաղաքական հայտարարություններ, մամլո հաղորդագրություններ, տեսաուղերձներ և սոցցանցերում հրապարակումներ. ԵԺԿԿ նախագահը անհետաձգելի խնդիրների վերաբերյալ պարբերաբար քաղաքական հայտարարություններ է հրապարակում: Օրինակ՝ բոլորովին վերջերս Բելառուսի կին քաղաքական ակտիվիստներին աջակցության տրամադրում, սեռով պայմանավորված բռնության վերաբերյալ ստամբուլյան կոնվենցիայի մասին հայտարարություն, լիբանանցի կանանց զորեղացում՝ Բեյրութի նավահանգստի 2020 թ. օգոստոսի 4-ի պայթյունից հետո.
- աջակցություն կանանց կազմակերպությունների ստեղծմանը. գործադիր խորհրդի անդամները պատրաստ են աջակցություն տրամադրել ԵԺԿ անդամ կուսակցությունների շրջանակներում կանանց կազմակերպության ստեղծման նախաձեռնություններին.
- աջակցություն կանանց առաջնորդության, նիստերի ժամանակ ելույթների ներկայացման վերաբերյալ ուսումնական դասընթացների և այլն. գործադիր խորհրդի անդամներին կարելի է հրավիրել դասընթացների կամ ըստ պահանջի ելույթներ ներկայացնելու:

Կանանց ազգային կազմակերպություններ

Կանանց ազգային կազմակերպությունների դերակատարումն իրենց համապատասխան քաղաքական կուսակցություններում համադրելի է եվրոպական մակարդակով ԵԺԿԿ-ի դերին: Դիտարկենք ԵԺԿԿ անդամ կազմակերպությունները, որոնք սովորաբար ունեն ստորև ուրվագծված նպատակներն ու գործառույթները.

- ֆորումի ստեղծում՝ իրենց կուսակցական գործունեությունն իրականացնելիս կանանց առջև ծառացող հատուկ խնդիրները քննարկելու համար.
- զանգվածային միջոցառումների կազմակերպում, որոնք կանանց իրազեկում են քաղաքացիական և քաղաքական իրավունքների և քաղաքական կյանքում նրանց ակտիվ մասնակցության կարևորության և ազդեցության մասին.
- ընտրությունների մասնակցությանը կանանց նախապատրաստում՝ նրանց խնդիրների մասին տեղեկացնելով և բացատրելով, թե ինչպես են գործնականում ընտրություններն անցկացվում.
- կանանց ուսուցում՝ տեղական, մարզային և ազգային ընտրություններում թեկնածու դառնալու համար. այս ուսուցումը ներառում է ընտրարշավների տարբեր կողմերին նվիրված դասընթացներ և լրատվամիջոցների հետ շփումների նախապատրաստում.
- ցանցերի ստեղծում և լոբբիստական աշխատանքներ՝ ընտրությունների ժամանակ կին թեկնածուներին և իշխանության ընտրված կանանց նեցուկ լինելու համար:

Վերը թվարկված միջոցառումները կարելի է գործնականում կիրառել նաև Հայաստանի քաղաքական կուսակցություններում: Սակայն խնդրում ենք հիշել քաղաքական մշակույթը և Ձեր կուսակցության կառուցվածքը: Առանց կաշկանդվելու՝ վերոգրյալը համապատասխանեցրեք Ձեր նպատակներին և միջոցներին:

Ձեր կուսակցությունում կանանց կազմակերպության ստեղծման համար պահանջվում է տարբեր մեթոդների կիրառում, որոնցից առավել նպատակահարմարներն ուրվագծված են ստորև: Հաշվի առեք, որ Ձեր համատեքստով և կուսակցության մշակույթով կթելադրվի Ձեր հատուկ իրավիճակին լավագույնս համապատասխանող և կանանց կազմակերպություն ստեղծելու հնարավոր առավել արդյունավետ ուղին:

Որտեղից սկսել

ՄԵԿՆԱՐԿԻ ՀԱՄԱՐ (ՍՈՍԿ) ԵՐԿՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆ ԿԱ. ՁԵՋ ՊԵՏՔ ԵՆ ԿԱՆԱՅՔ ԵՎ ՇՐԱԳԻՐ

Ա. Գաղափարակից կանանց խմբից սկսելը. կարևոր է Ձեր գաղափարի համար կուսակցության կանանցից աջակցություն ստանալը: Ասվածը կարող է լինել ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակով: Համակարգող հանձնաժողով. երբ որոշեք իրագործել Ձեր նպատակը, Դուք համակարգող հանձնաժողովի կարիք կունենաք՝ անհրաժեշտ աշխատանքի կատարումը տարբեր կանանց հանձնարարելու համար:

Բ. Գործողությունների ծրագիր. այս հանձնաժողովը կազմում է գործողությունների ծրագիր, որի մեջ քայլ առ քայլ նկարագրում եք Ձեր նպատակին հասնելու համար իրականացվելիք միջոցառումներ: Այս ծրագրում նշում եք նաև ժամանակացույցը՝ սահմանելով, թե ինչ ժամկետում եք ցանկանում ստեղծել Ձեր կազմակերպությունը:

Գործողությունների ծրագիր: Խնդիրներ, որոնց անհրաժեշտ է անդրադառնալ

Կանանց արդյունավետ մասնակցության համար կուսակցությունը պետք է իր կազմի, կառուցվածքի, գործընթացների և ֆինանսավորման միջոցով ապահովի արձագանքը գենդերային հարցերին և բոլոր կանանց ներառմանը: Շատ կուսակցություններում այս նախադրյալները լիարժեք գիտակցված չեն: Անհրաժեշտ է, որ սա հաշվի առնեք և չհիասթափվեք: Կանանց կազմակերպության ստեղծումը հաճախ ճիշտ խթան է մի գործընթացի համար, որի մեջ Ձեր կուսակցությունը ներդրում է ունենում՝ գենդերային հավասարության հարցերն ինտեգրելով իր քաղաքականության և ծրագրերի մեջ:

Գործողությունների ծրագիրը միանշանակ Ձեզ ճիշտ ուղու վրա կդնի: Ահա այն բաղադրատարրերը, որոնք Ձեզ անհրաժեշտ են գործի անցնելու համար.

- Պարզեք, թե ովքեր են Ձեր շահակիցները: Նշեք կուսակցական առաջնորդներին և ազդեցիկ համախոհ կարծիք ձևավորողներին՝ նրանց աջակցությանը դիմելու համար, մասնավորապես՝ առաջատար տղամարդկանց ներգրավեք որպես շահակիցների և անգամ դեսպանների:
- Պարզեք, թե ովքեր են Ձեր ընդդիմադիրները: Նշեք նրանց ու գտեք ընդդիմության հարցը կարգավորելու ուղիներ:
- Նկարագրեք Ձեր կուսակցության մշակույթն ու կառուցվածքը: Վերլուծեք, թե կանանց կազմակերպության ստեղծումն ինչպես է համապատասխանում Ձեր կուսակցության մշակույթին և դրա իրավակազմակերպական կառուցվածքին: Յուրաքանչյուր կուսակցություն սեփական գրված և չգրված կանոններն ունի:

• Իրավաբանական կողմը. Ձեր կուսակցությունում իրավաբանական պաշտոնի ստեղծումը կարևոր է: Ուշադրությո՛ւն դարձրեք Ձեր կուսակցության կանոնադրությանը. այն կուսակցության ասոցիացիաների մասին դրույթ ունի՞: Ի՞նչ է նրանում ասվում երիտասարդական կազմակերպության մասին: Այն ունի՞ Ձեր կուսակցության կողմից իր երիտասարդական և կանանց ասոցիացիաներին սուբվենցիաներ տրամադրելու դրույթ: Եթե ոչ, Դուք կարող եք փորձել Ձեր կուսակցության կանոնադրությունը փոխել: Բացի դրանից, Ձեզ անհրաժեշտ է կանոնադրություն կազմել կանանց կազմակերպության համար, որը ցանկանում եք հիմնել: Կարող եք ապավինել ԵԺԿԿ-ի աջակցությանը:

• Ֆինանսավորումից օգտվելու հնարավորություն. կանանց կազմակերպություն ստեղծելու և գործունեությունը նախաձեռնելու համար նպատակահարմար է ֆինանսական հիմքը: Նման հիմքը կարող է երաշխավորվել կուսակցության կանոնադրության դրույթի միջոցով: Հնարավոր է նաև այն երկկողմ կազմակերպել՝ կուսակցության նախագահի կամ կուսակցության խորհրդի հետ՝ կախված նրանից, թե ովքեր են Ձեր շահակիցները:

• Կուսակցության ներսում ակտիվ և տեսանելի լինելը. Ձեզ լսելի՛ դարձրեք, Ձեզ տեսանելի՛ դարձրեք: Սա օգնում է տղամարդկանց՝ գիտակցել, որ կանայք քաղաքականությամբ հետաքրքրված են և կուսակցության աշխատանքին նպաստելու հմտություններ ունեն:

• Կուսակցության կին անդամների և համախոհ կանանց շրջանում, ովքեր դեռ անդամ չեն, աջակցությո՛ւն ձևավորեք: Դա Ձեզ օգնում է Ձեր նպատակի իրագործմանն աջակցելու համար կանանց ավելի մեծ խումբ ստեղծելու հարցում: Աջակցություն ապահովելիս այն օգնում է կանանց քաղաքական խնդիրների բացահայտմանը, որոնք կարևոր են բոլոր կանանց, ինչպես նաև տղամարդկանց համար: Արևմտյան բալկանյան երկրներից մեկի օրինակն է՝ քաղաքական միջոցառումների թեմային անդրադարձը՝ կրծքագեղձի քաղցկեղի հետազոտությունը և բուժումն ապահովելու համար:

• Տեղացի կանայք կարող են նաև զորեղացած զգալ իրենց՝ կուսակցության ներսում տեղացի կանանց խմբեր ստեղծելու համար: Այս խմբերին աջակցելով՝ Դուք ներքևից վերև հենարան եք ստեղծում:

• Միջազգային աջակցության ներգրավում. ԵԺԿԿ-ը, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամը (CDU, Գերմանիա), «Էդուարդո Ֆրայ» հիմնադրամը (CDU, Նիդերլանդներ) և Բուդապեշտի «Ռոբերտ Շուման» ինստիտուտը հաստատ Ձեր նախագծին հավանություն կտան: Կարող եք նրանց հրավիրել Ձեզ համար Հայաստանում ուսումնական դասընթաց կազմակերպելու կամ հանդիպմանը զեկույցով հանդես գալու՝ կանանց կազմակերպության ստեղծման Ձեր նախագծի մեկնարկի համար, կանանց ընտրարշավի միջոցառմանը կամ հնարավոր այլ միջոցառումների: Բացի դրանից, նրանց կարող եք դիմել, որ հանդես գան որպես դեսպան՝ Ձեր նախագծի համար Ձեր կուսակցության առաջնորդների հավանությունը ստանալու նպատակով: Կամ հարևան երկրներից հրավիրեք առաջատար կանանց, որոնք իրենց ԵԺԿ փոխկապակցված կուսակցությունում հաջողությամբ կանանց կազմակերպություն են հիմնել: ԵԺԿ ընտանիքում մեծ փորձ կա, և բազմաթիվ շահակիցներ ցանկանում են Ձեզ ձեռք մեկնել:

• ԵԺԿԿ անդամակցության համար դիմե՛ք անմիջապես, երբ կբավարարեք չափանիշները, այսինքն՝ իրավաբանորեն ստեղծված կանանց կազմակերպություն՝ հիմնված կանոնադրության և քաղաքական ծրագիր ունենալու վրա:

Իրականացում, մոնիթորինգ և գնահատում

Համակարգող հանձնաժողովի նշանակումից և գործողությունների ծրագրի կազմումից հետո կարող եք սկսել դրա իրականացումը գործնականում: Ձեր ուշադրությունն ենք հրավիրում Ձեր հավակնությունը իրատեսական չափերով սահմանափակելու վրա: Այս աշխատանքն անելու համար Ձեզ կանայք են հարկավոր, աջակցության համար տղամարդկանց կարիք ունեք, իրավաբանական և ֆինանսական հարցերի իմացություն է անհրաժեշտ, արդյունավետության համար՝ քաղաքական հմտություններ և կուսակցության ներսում շահակիցներ՝ արագ հաղթանակների հասնելու համար:

Համակարգող հանձնաժողովի խնդիրը ծրագրի քայլ առ քայլ իրագործումն է, իրականացված քայլերի մշտադիտարկումը (մոնիթորինգը), կանոնավոր գնահատումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Ձեր նպատակների, հավակնության կամ ժամանակացույցի համապատասխանեցումը:

Քաղաքականությունն անկանխատեսելի է: Ազգային կամ տեղական ընտրությունները, ներքին կուսակցական նշանակումները, չնախատեսված դեպքերը հանգամանքներ են, որոնք կարող են անսպասելիորեն փոխվել: Հաշվի առեք հանկարծակի ի հայտ եկող «հնարավորությունները», որոնք կարող են Ձեր գործի համար նպատակահարմար լինել: Միշտ ճկո՛ւն եղեք և պատրա՛ստ՝ հարմարեցնելու Ձեր նպատակները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ տեքստը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու Հայաստանում որպես կին քաղաքականապես ներգրավման եղանակների մասին՝ ներկայացնելով ԵՄ-ում և եվրոպական երկրներում, ԵԺԿ անդամ և կանանց կազմակերպություն ունեցող կուսակցությունների կողմից դրա իրականացման մասին տեղեկություններ և օրինակներ: Համոզված ենք, որ կատարելով այս՝ գուցե և փոքր քայլերը, կանայք կարող են իրենց ձայնը լսելի դարձնել և նպաստել քաղաքականությանը:

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՐԺԱՆԻ՛Է ԴՐԱՆ:

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1983թ. դեկտեմբերի 4-ին Երևանում: Ավարտել է Վահան Տերյանի անվան թիվ 60 դպրոցը՝ գերազանցությամբ: Ավարտել է ԵՊՀ-ի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, մագիստրատուրան և ասպիրանտուրան՝ կրկին գերազանցությամբ: Դասավանդում է նույն համալսարանի իրավագիտության, նաև ժուռնալիստիկայի ֆակուլտետներում մի քանի առարկաներ: Աշխատել է տարբեր կառույցներում: Պետական համակարգում առաջին քայլերը սկսել է 2003թ.-ից՝ ՀՀ արդարադատության նախարարությունում զբաղեցնելով ամենացածր՝ առաջին կարգի մասնագետի պաշտոնը: Արդարադատության նախարարությունից հետո աշխատանքի է անցել ՀՀ նախագահի աշխատակազմում, որից հետո 2012թ.-ին համամասնական ցուցակով ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր: Այնուհետև նշանակվել է ՀՀ արդարադատության նախարար, որից հետո, 2017թ. ընտրությունների արդյունքում, ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի փոխխոսնակ: 2018թ. ապրիլյան իրադարձություններից հետո առավելապես զբաղվում է փաստաբանական, հասարակական և գիտակրթական գործունեությամբ, որով զբաղվել է նաև քաղաքական ողջ գործունեության ընթացքում: Ամուսնացած է:

• Ինչո՞ւ է անհրաժեշտ կամ որքանո՞վ է կարևոր, որ կինը զբաղվի քաղաքականությամբ:

Ոչ թե անհրաժեշտ է, որ կինը զբաղվի քաղաքականությամբ, այլ կինը նույնքան իրավունք ունի զբաղվելու քաղաքականությամբ, որքան տղամարդը: Այդ կարևորությունը բխում է կնոջ՝ նաև իր սեռով պայմանավորված, հատկապես որոշակի ոլորտներում կատարած աշխատանքի և մոտեցումների տարբերությամբ: Բացի դրանից, պարզապես կնոջ ներկայությունը քաղաքականության մեջ նույնքան անհրաժեշտ է, որքան անհրաժեշտ է կնոջ ներկայությունը հասարակական, քաղաքական կյանքի մյուս բոլոր ոլորտներում առհասարակ:

• Ինչո՞ւ որոշեցիք զբաղվել քաղաքականությամբ:

Որոշեցի զբաղվել քաղաքականությամբ, որովհետև հավատացի, հասկացա, որ այն հնարավորություն է տալիս փոխելու ինչ-որ բան՝ լուծելու խնդիրներ, որոնք այլ ոլորտներում ու այլ տիրույթներում չես կարող անել:

• Որո՞նք էին Ձեր առաջին քայլերն այդ ճանապարհին: Որո՞նք էին Ձեր ճանապարհին հանդիպած խոչընդոտները:

Երկարատև մասնագիտական ուղի անցնելուց, պետական համակարգում աշխատելուց հետո բուն քաղաքական պրոցեսներին մասնակցել եմ 2012թ.-ից սկսած, երբ առաջին անգամ մասնակցել եմ խորհրդարանական ընտրություններին և ընտրվել եմ պատգամավոր: Խոչընդոտը ամեն կնոջ համար ցանկացած փուլում քաղաքականություն մուտք գործելիս ելման կետի անհավասարությունն է և թերահավատությունը նույն հնարավորությունները կամ նույնիսկ ավելի շատ հնարավորություններ ունեցող տղամարդկանց հետ համեմատության մեջ:

• Որքանո՞վ էր Ձեր՝ քաղաքականությամբ զբաղվելու որոշումը բխում Ձեր մանկության/պատանեկան երազանքից, պատանեկան/երիտասարդական գործունեությունից, Ձեր շրջապատի գործունեությունից:

Չէի ասի, որ դա որևէ երազանքից է բխել: Դա առավելապես զարգացել է էվոլյուցիոն ճանապարհով, իմ՝ պետական համակարգում աշխատանքային գործունեությունից և առավելապես պայմանավորված է այն հարցի պատասխանով, թե ինչու որոշեցի զբաղվել քաղաքականությամբ: Այս հարցի պատասխանն է՝ հնարավորության համար՝ լուծել խնդիրներ, փոխել մոտեցումներ, առաջարկել լուծումներ:

• Ինչպիսի՞ն էր Ձեր ընտանիքի դերը Ձեր՝ քաղաքականությամբ զբաղվելու որոշման կայացման մեջ: Ինչպե՞ս են Ձեզ աջակցել Ձեր ընտանիքի անդամները, Ձեր համախոհները, ընկերները որոշման կայացման հարցում և Ձեր գործունեության ընթացքում:

Ընտանիքս հարգել է իմ որոշումը, միշտ աջակցել և կանգնած է եղել իմ կողքին:

• Ի՞նչ խորհուրդ կտաք քաղաքականությամբ զբաղվել ցանկացող կանանց: Ձեր ուղերձը:

Քաղաքականությամբ զբաղվել ցանկացող կանանց կասեմ հետևյալը. եթե դուք վստահ եք ձեր հնարավորություններին, եթե ոչ թե ցանկանում եք պարզապես հանրային ճանաչելիություն ձեռք բերել, այլ ուզում եք հանրային օգուտ ապահովել Ձեզ և ուրիշների համար, մի՛ ընկրկեք, մի՛ նահանջեք, հավատացե՛ք, բայց միշտ քաջ գիտակցե՛ք, որ ճանապարհին չափազանց շատ են խոչընդոտները, անտեղի հարվածները, անհավասար ելման կետերը, անազնվությունը: Բայց ամեն ինչ հաղթահարելի է, եթե հստակ նպատակ ունես և գիտես, թե ուր ես գնում:

ԷԼԻՆԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ծնվել է 1978թ. նոյեմբերի 18-ին Երևանում: 2000թ. ավարտել է Երևանի դատական փորձաքննությունների ինստիտուտը, 2008թ.՝ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրան: Մասնագիտությունը՝ իրավագետ-փորձագետ:

2000-2002թթ. դասավանդել է Երևանի դատական փորձաքննությունների ինստիտուտում, 2005-2007թթ. և 2013-ից առ այսօր դասավանդում է Հյուսիսային համալսարանում: 2002-2008թթ. աշխատել է Հասարակական երկխոսության և զարգացումների կենտրոնում որպես գործադիր տնօրեն: 2001թ.-ից ՀՀ փաստաբանների պալատի անդամ է, փաստաբան: 2012թ. մայիսի 6-ին ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ: 2017թ.-ից «Այլընտրանքային նախագծեր խումբ» փորձագիտական կազմակերպության անդամ է: Անկուսակցական է: Գիտական մի շարք հոդվածների հեղինակ է: Ամուսնացած է, ունի երկու զավակ:

• Ինչո՞ւ է անհրաժեշտ կամ որքանո՞վ է կարևոր, որ կինը զբաղվի քաղաքականությամբ:

Աշխարհի բնակչության մոտավորապես կեսը և Հայաստանի բնակչության ավելի քան 53%-ը կանայք են: Հետևաբար, սոցիալական այս խմբի քաղաքական ներուժը բավականին մեծ է, որի անտեսումը կոպիտ սխալ կլինի մեր երկրի համար: Բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ ցանկացած երկրում առողջապահությունը, տնտեսական զարգացումը և սոցիալական բարեկեցությունը սերտորեն կապված են հասարակությունում կնոջ կարգավիճակի հետ:

Հասարակության մեջ կանանց դերի վերաբերյալ կան թյուրընկալումներ, համաձայն որոնց՝ կինը չի կարող արդյունավետորեն զբաղվել քաղաքականությամբ կամ զբաղեցնել ղեկավար պաշտոն: Սրանք զուտ կարծրատիպեր են և ընդհանրապես կապված չեն մասնագիտական ունակությունների հետ: Կանայք միատարր խումբ չեն. երիտասարդ

կամ տարիքով, կրթված կամ առանց կրթության, ակտիվ կամ պասիվ քաղաքացիական կեցվածք ունեցող, քաղաքում կամ գյուղում ապրող՝ նրանք բոլորն ունեն ամենատարբեր կարողություններ և կենսափորձ: Կանանց ներուժի օգտագործումը կնպաստի երկրում քաղաքական որոշումների կայացման և կառավարման արդյունավետության բարձրացմանը:

• Ինչո՞ւ Դուք որոշեցիք զբաղվել քաղաքականությամբ:

Որպես փաստաբան, հասարակական գործիչ պայքարել եմ մարդկանց կյանքում ինչ-որ բան փոխելու, ճակատագրերի վրա ազդեցություն ունենալու համար: Սակայն պրակտիկան ցույց տվեց, որ բազմաթիվ խնդիրներ կապված են իրավական բացերի հետ, որոնց կարգավորման համար անհրաժեշտ են քաղաքական կամք և քաղաքական որոշումներ: Պրոցեսների վրա ազդելու ամենաարդյունավետ միջոցը դրանց մասնակից դառնալն էր. մասնակից լինել քաղաքական գործընթացներին, ազդել քաղաքական որոշումների վրա: Եվ թեև դրա համար լուրջ ջանքեր և համառություն են պահանջվում, այնուհանդերձ, դա կարևոր է, եթե ուզում ես սեփական ներդրումն ունենալ երկրի զարգացման հարցում:

• Որո՞նք էին Ձեր առաջին քայլերն այդ ճանապարհին: Որո՞նք էին Ձեր ճանապարհին հանդիպած խոչընդոտները:

Առաջին քայլերը եղել են հասարակական գործունեության ընթացքում, երբ փորձում էինք ակտիվ ներգրավվածություն ունենալ որոշումների կայացման գործընթացում, հանրային ազդեցություն ունենալ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունման գործընթացում, նախաձեռնել և օրենսդրին հասցնել օրենքների նախագծեր: Այնուհետև անցումը հասարակական դաշտից քաղաքականին շատ սահուն եղավ: Միակ խոչընդոտը սկզբնական փուլում, որ կարող եմ նշել, երիտասարդ կին քաղաքական գործչի գործունեությանը մի փոքր վերապահումով մոտենալն էր: Հետագայում դա շատ արագ հաղթահարվեց աշխատանքով և քաղաքական գործունեության արդյունքներով:

• Որքանո՞վ էր Ձեր՝ քաղաքականությամբ զբաղվելու որոշումը բխում Ձեր մանկության/պատանեկան երազանքից, պատանեկան/երիտասարդական գործունեությունից, Ձեր շրջապատի գործունեությունից:

Քաղաքականությամբ զբաղվելու որոշումը մանկության կամ պատանեկան երազանք չի եղել, թեև կարելի է կապ տեսնել պատանեկան որոշման հետ՝ նպաստել, որ երկրում լինի արդարություն, պաշտպանել մարդկանց իրավունքները և շահերը: Այդ տարիներին նպատակի իրականացման միակ ուղին, իմ գնահատմամբ, իրավական ոլորտում էր: Հետագայում իրավական ոլորտը խաչվեց քաղաքականության հետ:

• Ինչպիսի՞ն էր Ձեր ընտանիքի դերը Ձեր՝ քաղաքականությամբ զբաղվելու որոշման կայացման մեջ: Ինչպե՞ս են Ձեզ աջակցել Ձեր ընտանիքի անդամները, Ձեր համախոհները, ընկերները որոշման կայացման հարցում և Ձեր գործունեության ընթացքում:

Իմ ամենահավատարիմ համախոհները և աջակիցները ամուսինս, ծնողներս և մտերիմ ընկերներս են: Նրանք են քաջալերել՝ չվհատվել, չհանձնվել, հավատարիմ մնալ սկզբունքներին: Նրանց աջակցությամբ եմ շարունակել չընկրկել ու պայքարել անարդարության ու անհանդուրժողականության դեմ:

• Ի՞նչ խորհուրդ կտաք քաղաքականությամբ զբաղվել ցանկացող կանանց: Ձեր ուղերձը:

Հաղթահարե՛ք կարծրատիպերը, որոնք ձեզ ստիպում են հետ կանգնել ձեր որոշումից: Ձեզանից է կախված, թե ինչպիսի հաջողություններ կունենաք այս ոլորտում: Հիշե՛ք **չ**-ով սկսվող երեք կարևոր կանոն՝ չվախենալ, չնահանջել, չդավաճանել սեփական սկզբունքներին և ինքդ քեզ:

- *ՀՀ Սահմանադրություն*
- *ՀՀ ընտրական օրենսգիրք*
- *ՀՀ օրենքը Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին, 20 մայիսի, 2013թ.*
- *ՀՀ կառավարության որոշում, 19 սեպտեմբերի, 2019թ., N1334-L, Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023թթ. ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին*
- *Հայեցակարգ գենդերային քաղաքականության, ՀՀ կառավարության 11 փետրվարի, 2010թ. N5 արձանագրային որոշման համաձայն*
- *Կովկաս, Սոցիալական հետազոտությունների կենտրոն և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, Քաղաքացիական և քաղաքական մասնակցության գենդերային ասպեկտները Հայաստանում. Սոցիալական հետազոտությունների եզրակացությունների մասին զեկույց, Երևան, 2011թ.*
- *Հայաստան. երկրի գենդերային իրավիճակի գնահատում, Ասիական զարգացման բանկ, հուլիս, 2015թ.*
- *Գենդերը, գյուղատնտեսությունը և գյուղական շրջանների զարգացումը Հայաստանում. երկրի գենդերային գնահատում սերիա, Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, Բուդապեշտ, 2017թ.*
- *Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում, սոցիոլոգիական հետազոտության արդյունքների զեկույց, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, Երևան, 2016թ.*

- *Երիտասարդական մասնակցություն, դասընթացների և ծրագրերի իրականացման ձեռնարկ, «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ, 2009 թ.*
- *Joerg Forbrig, Revisiting youth political participation: Challenges for research and democratic practice in Europe, Council of Europe Publishing, 2005*
- *Deepening democracy in a fragmented world. World Development Report, UNDP, 2002*
- *Weichmann, E., Politische Repräsentanz von Frauen, Analysen & Argumente Nr. 416/November 2020 (Konrad-Adenauer-Stiftung, Berlin 2020)*
- *https://data.ipu.org/women-ranking?month=1&year=2020*
- *https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e0848*
- *https://en.wikipedia.org/wiki/Mind_map*
- *http://www.eppwomen.eu/documents/statutes/*
- *Women in Politics in the EU (Brussels, 2019)*
- *https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2019/635548/EPRS_BRI(2019)635548_EN.pdf*
- *OSCE Handbook on Promoting Women's Participation in Political Parties*
- *https://www.osce.org/files/f/documents/e/f/120877.pdf*
- *The Role of Political Parties in Promoting Women in Politics*
- *https://www.iknowpolitics.org/sites/default/files/summary_e-discussion_on_political_parties_0.pdf*
- *https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2019/635548/EPRS_BRI(2019)635548_EN.pdf*
- *https://www.europarl.europa.eu/RegData/etudes/ATAG/2020/646189/EPRS_ATA(2020)646189_EN.pdf*

ԼԻԼԻԹ ԱՍԱՏՐՅԱՆ

Լիլիթ Ժիրայրի Ասատրյանը միջազգային փորձագիտական փորձառություն ունի կանանց և երիտասարդների մասնակցության, կանանց քաղաքական մասնակցության, կանանց ձեռներեցության, սոցիալական ձեռներեցության, երիտասարդական ձեռներեցության, ՄՓՄՁ-ների (միկրո, փոքր և միջին ձեռնարկատիրություն), անձնական և մասնագիտական աճի ուղղորդման (coaching) և մի շարք այլ ոլորտներում: Լիլիթ Ասատրյանը Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի և ՀՀ կին ձեռներեցների ցանցի հիմնադիր նախագահն է:

Միջազգային մի շարք ծրագրերի հավատարմագրված դասավանդող է (UN-ILO, UN-ITCILO, UN-APCICT/ESCAP, GIZ, SBFIC, IFC WB Group, Council of Europe և այլն): Համագործակցում է մի շարք միջազգային կառույցների հետ:

Հեղինակ է Հայաստանում և նրա սահմաններից դուրս տպագրված մասնագիտական հոդվածների և ձեռնարկների:

Ունի երկու դուստր:

Լիլիթը սիրում է ճամփորդել, շատ ժամանակ է անցկացնում բնության մեջ: Նա արշավորդ է. երկու անգամ կանգնել է Մասիսի, մեկ անգամ՝ Սիսի և բազում անգամներ՝ Հայկական բարձրավանդակի այլ լեռների գագաթներին:

ԴԿՏ. ՀԻԼԻ Ջ. ՎԱՆ ԴԵ ՍՏՐԻՔ

Հիլին փորձառություն ունի քսաներորդ դարի քաղաքական պատմության բնագավառում՝ պաշտոններ զբաղեցնելով մի քանի համալսարաններում և ուղեղային կենտրոններում (thinktanks): Նրա հետազոտությունների թեմաներն են՝ կանանց պատմությունը, քրիստոնեա-ժողովրդավարությունը և եկեղեցի-քաղաքականություն հարաբերությունները:

Նա տարիներ շարունակ եղել է Նիդերլանդների ՔԴԿ (CDA) ակտիվ անդամ, մասնավորապես՝ կանանց կազմակերպությունում (CDAV) և ԵԺԿ կազմում դրա եվրոպական հովանոց՝ ԵԺԿ կանանց կազմակերպությունում: Ներկայումս նա զբաղեցնում է ԵԺԿ կանանց կազմակերպության գլխավոր քարտուղարի պաշտոնը (www.eppwomen.eu): Հիլին գիտի, թե ինչ է նշանակում պաշտպանել կանանց իրավունքները և շեշտադրել գենդերային հավասարությունը:

Վան դե Ստրիքն ամուսնացած է և ունի քսան տարին վերջերս բոլորած երկու դուստր: Նա սիրում է զբաղվել այնպիսի սպորտաձևերով, ինչպիսիք են հեծանվային ու դահուկային սպորտը, և վայելել իր ընտանիքի ընկերակցությունը:

ՎԻՏՍԿԻ ՓՈՍԹՄԱ

2019թ.-ից Վիտսկի Փոսթման Նիդերլանդների խորհրդարանում Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության պատգամավոր է: 2002թ.-ից նա կուսակցության ակտիվ անդամներից է. կուսակցության կազմում աշխատել է տարբեր բնագավառներում՝ որպես խորհրդի անդամ, քաղաքականության հարցերով խորհրդական և կուսակցության տարբեր օղակներում ակտիվ զբաղվել է քաղաքական արշավներով՝ որպես արշավների առաջնորդ կամ ռազմավարության պատասխանատու:

Փոսթման փորձառու դասավանդող է: Նրա սեփական ուսումնական ընկերությունն ունի և վերապատրաստել է «Դիսնեյ» ընկերության, «Բժիշկներ առանց սահմանի» կազմակերպության, Դելֆտի տեխնիկական համալսարանի մասնագետներին և Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության (CDA) քաղաքական գործիչներին: Վիտսկին նաև Հոլանդական ավտոմոբիլային միության (ANWB) ղեկավարներից է: Նիդերլանդների բնակչության մեկ քառորդը ANWB միության անդամ է:

Վիտսկին միջազգային գործարարություն է ուսանել Մաաստրիխտի համալսարանում և երկու երեխաների միայնակ մայր է:

ԺԱՄԱՆԱԿՆ Է ԳՈՐԾԵԼՈՒ

ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

ՁԵՌՆԱՐԿ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Խմբագիր՝ Աստղիկ Բալայան
Թարգմանիչ՝ Լիլիթ Սիմոնյան

Դիզայն, սրբագրում, տպագրում՝ «Սկետչ - Սթայլ» ՍՊԸ